ՓԵՏՐՈՒԱՐ 1864 ԹՈՒԱԿԱՆԻ

ԱԶԳԱՅԻՆ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ.

(Շարունակութիւն.)

ԿՐՕՆԻ ԴԱՍԱՏՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՅՐ ԴՊՐՈՑԻ ՄԷՋ.

Կրիստոնէական կրօնը քննելով, չունիմք պատճառ հարցանելու, թէ ինչ խորհուրդ ունի դորա ուսումը և յառաջադիմութիւնը դպրոցների մէջ և առհասարակ: Դա ինքն ըստ ինքեան է մի բացարձակ վախճանական նպատակ, և բոլոր միւս մարդկային խորհուրդները և ձգտողութիւնքը դիմումն և ամփոփվումն կրօնի մէջ իբրև ի բարւոյ ամենավերին կատարի մէջ: Ամենայն բան, որ տակաւին մարդուս համար յարդ և կշիռ ունի գիտութեան և կեանքի մէջ, յառաջանում կրօնի աղբիւրից և նորա է թափվում այս սուրբ ծովի մէջ: Ոչինչ բան ճշմարիտ, ոչինչ բան գեղեցիկ, ոչինչ բան բարի չէ, որ չունի իւր ծագումն կրօնից և չէ ստանում իւր զօրութիւնը և սրբութիւնը նորա մէջ: Կրօնը է հաղորդութիւն մարդու և Աստուծոյ մէջ և այս հաղորդութեան մէջ դրած է ազատութիւնը բոլոր եղբական հոգեկրից և մեղսական ձգտողութիւններից: Կրօնի մէջ եղբական մարդը գիտէ իւր անձը Ա-

տուծոյ անեղբական կեանքի մէջ ընդունուած և այնուհետև ազատ է նա կատարելապէս, ունի խաղաղութիւն, վստահութիւն և երանութիւն: Թէպէտ և տակաւին շատ բաներ ձնշումէին նորան դուրսից, թէպէտ և նա ինքը տակաւին շատ անգամ ձնշումէր իւր անձը, բայց նա մտանումէ հաղորդութիւն Աստուծոյ հետ, ուղղեցնումէ իւր միտքը այս հաղորդութեան վերայ, և այսպէս փախչումէին աշխարհական հոգսերը և ցաւերը ինչպէս առաւօտեան մառախուղը արևու ջերմութեան երեսից. նա ունի Աստուած և ի՞նչ այլևս պակասելու էր նորան: Եւ ունի մի բարի, որ անհամեմատ առաւելութեամբ պատուական է քան թէ բոլոր բարիքը, որ դեռ ևս պակաս են նորան, թէև լինէր սա իւր յաւուրկ թևերի և անկատար բարութիւնը և սրբութիւնը, որոյ վերայ շատ անգամ ունէր տեղիք դանդաղելու: Եւ յս հաղորդութեան մէջ լռումէին ցաւերը և հոգսերը, այս տեղ թագաւորումէ միայն ուրախութիւն, ազատութիւն, սէր և երանութիւն: Եւ յս հաղորդութեան մէջ ունի մարդս լիակատար վայելքը ձշմարտութեան. վասն զի Աստուած միայն է կատարեալ և անխառն ձշմարտութիւնը, և ինչ որ այլ բան բայ ի դորանից ասվումէ ձշմարտութիւն, կամ չէ ձշմարտութիւն, կամ թէ ստանումէ ձշմարտութեան յատկութիւն, նորանով միայն, որ Աստուծոյ միանչնաւոր գոյութիւնը մի առանձին կերպով ցոլանումէ նորա մէջ: Եւ յս հաղորդութեան մէջ միայն ունի մարդս յաւիտենական յոյս և անսուտ ակնկալութիւնը անմահութեան: Պատճառ, մարդկային գոյութեան անեղծանելի բնութիւնը դրած է միայն Աստուծոյ հետ միութեան մէջ, Աստուծոյ, որ միայն ունի անմահութիւն, և իւր արարչական խօսքով բաշխումէ արարածին, որում կամենումէ: Ամրութիւնը և ստուգութիւնը հաւատոյ դեպ ի մարդկային հոգու անմահութիւնը նոյն չափով աճումէ և զօրանումէ, որ չափով զօրանումէ և աճումէ հաւատը դեպ ի Աստուծոյ անձնաւորութիւնը, և ներքին մերձաւորութիւնը հաղորդութեան նորա հետ:

Եւ ապդ, եթէ քրիստոնէական կրօնի մէջ դրած են այս բոլոր պատուական բարիքը, ազատութիւն և ձշմարտութիւն, խաղաղութիւն և ուրախութիւն, յոյս և վստահութիւն, անմահութիւն և յաւիտենական կեանք, որովհետև Աստուած ինքը յայտնվումէ այդ տեղ, Աստուած, նախատատճառը և անսպառելի աղբիւրը այդ բոլոր բարիքի, ով այլևս կարող էր երկիւղ լինել, թէ

կրօնը ինքը իւր համար է և ոչինչ այլ բանի համար, թէ նա է մարդկութեան բացարձակ վախճանական նպատակը, և թէ մարդու բոլոր միւս նպատակները ամփոփուած են այս միևիս մէջ. այո՛, պատուաւոր են նպատակ իւրեանց համար այն բանով միայն, որ ստորադրուած են, իբրև հնարներ, այս միակ, յաւիտենական, բացարձակ վախճանական նպատակին, որ դրած է կրօնի մէջ: Աւրեմն, քրիստոնէական կրօնը և ազգային մայր դպրոցի մէջ, որպէս ամենայն ուրեք, պարտ է տեղ գտանել իւր ինքեան աղաղաւ, իւր բացարձակ արժանաւորութեան աղագաւ. այո՛, նա պարտ է լինել կենտրոնը բոլոր դպրոցական կազմուածի և պարտ է այդ կազմուածի մէջ մինչև նորա վերջին ծայրերը և ամենանուրբ թելերը ներս թափանցել և շարժել նորան: Եւ որովհետև քրիստոնէական կրօնը ունի իւր ինքեան մէջ այս բացարձակ խորհուրդը և այս անվախճան արժանաւորութիւնը, վասն որոյ բերում է նա կենդանի պատուիրեր ամենայն տեղ, ուր նա ներս է թողնում: Եւ մի ազգային վերին դպրոցի մէջ մանաւանդ, աշակերտների բարոյական կեանքը կախ է այն յարդանքից, որ ունին նոքա դէպ ի քրիստոնէական կրօնը: Երբ որ քրիստոնէութեան հոգին վճռապէս և առ ի սրտէ չէ համարվում շարժող հոգին բոլոր դպրոցական կազմուածի և չէ պահպանվում ամենայն զօրութեամբ և ճանրութեամբ. այնուհետև աշակերտների բարոյականութիւնը գլորվում է դէպ ի ցած. ուր չկայ ճշմարտութեան հոգին, այն տեղ է ստութեան հոգին. ուր չէ թագաւորում քրիստոնէական կրօնի հոգին, այն տեղ թագաւորում է խաբէութիւն, անձնամոլութիւն, ստահակութիւն, թագնութիւն, անխղճմտութիւն և ամենայն տեսակ պիղծ արատներ: Այո՛, արտաքին օրէնքով և խստութեամբ կարելի է միայն յետ պահել անառակութեան կոպիտ արտաքայքայութիւնը կամ թէ հալածել նորանց դէպ ի գիշերային խաւարը, դէպ ի սրահ ծածուկ անկիւնները, և պատուասիրութիւնը դրդուելով, հրապարակական հարցաքննութեամբք և դոյա պէս հնարներով խթել աշակերտի աշխատասիրութիւնը, բայց ով, սրտի նկատմամբ վկայութենից բղխող, զօրութիւն բարոյականութեան, սէր դէպ ի Աստուած և դէպ ի մարդիկ, սէր դէպ ի իւր կոչումը և հաստատում խղճմտութիւն դորա մէջ. այս բոլորս այն տեղ, ուր քրիստոնէութեան հոգին չէ պահվում և պահպանվում իբրև կեանքի ամենապատուական գանձը, կորած է անդառնալի:

Նայց և աշակերտների գիտական յառաջադիմութիւնը և դպրոցի գիտական հոգին առ հասարակ կախ են կրօնական հաւատից և կրօնական ճանաչողութենից: Երկին խմիմտութիւնը և հաւատարմութիւնը աշխատութեան մէջ, որ յառաջանում կրօնի զօրութեամբ, է աւելի յառաջ շարժող խթանը գիտութեան մէջ: Այն աշակերտը, որ խղճմտութեամբ և հնազանդութեամբ վարժապետի հրամանին լսուցանում իւր աշխատութիւնքը, անտարակոյս ուսանում մի քաջ և ականատես բան: Նայց կրօնը, միտ դնելով ազգային դպրոցի խորհրդին, ևս աւելի խորին կերպով է առաւել ճանաչում հնարը գիտութեան: Ազգային վերին դպրոցների խորհուրդն է զարգացնել գիտական հոգին, ճանաչողութեան և ճշմարտութեան հոգին: Ստահայեաց ժողովրդակարդները, որոց անդամքը պատրաստում վերին ազգային դպրոցը, կոչուած են ճանաչել բոլոր բանները, ինչպէս դոքա ճշմարտութեամբ են, որովհետև բանների ճանաչողութեան վերայ հիմնաւորվում դաստիարական աշխատակութիւնը կոչման վիճակի մէջ: Նայց, եթէ կամինք ճանաչել բանները, ինչպէս որ դոքա ճշմարտութեամբ են, այդ խորհրդով ոչինչ այնքան հարկաւոր և այնքան ճանաչողութիւնը նոյն ինքն յատկենական ճշմարտութեան, որ բոլոր բանների ճշմարտութեան մէջ դարձեալ հանդիպում և պատկերանում մեզ: Ամենայն բանների վերայ ճշմարտութեան կնիքը դրոշմուած է, և նա միայն ճանաչում դորան աւելի պայծառապէս, որոյ աչքի առաջև ճշմարտութեան սկզբնատիպն, Աստուածութեան դաղափարի ամենապարզ ճանաչողութիւնը լուսաւորուել է:

Այս յատկենական, մաքուր, ամենակատար ճշմարտութիւնը, որ ինքն Աստուած է, բովանդակվում քրիստոնէութեան մէջ: Քրիստոնէութիւնը ուսուցանում, ինչ որ Աստուած ինքն իւր մէջ է և վերաբերութեամբ դէպ ի աշխարհը: Նորա պատմութեան և Յիսուսի Քրիստոսի պատմութեան և իմաստալից ասացուածների մէջ, որ բովանդակվում են սուրբ գրքում, յայտնի են կայացած բացարձակ ճշմարտութիւնը, ուրեմն և նորին խոհութիւնը ամենայն ճշմարտութեան և ճանաչողութեան, և հարկաւոր է, որ մարդս սկիզբանէ դորանից, և յետոփոխ դորանից որպէս իւր միս և արիւն, և շինէ դորանից իւր յատուկ գոյութեան շաժարանների մինը:

Ով կը յաջողի դա և անտարակոյս պիտի յաջողի ամենայն մարդու, նա գտել է դրբանով ամենայն ճշմարտութեան բացարձակ չափը և այդպէս կսկ ստացել է առաւել կարող ձեռնտու հնարը ամենայն ճանաչողութեան առարկայական աշխարհի, ինչ նպատակի վերայևս ուղղեցնելը դրան: Ունդը բաները բղխում են Աստուծոյ, և այդպէս Աստուած գտանվում ամենայն բաների մէջ և Աստուած է ճշմարտութիւնը ամենայն բաների, որ մարդս խնդրում ճանաչողութեան մէջ: Ով իւր մէջ գիտակից է Աստուծոյ գոյութեանը, նա չէ այլևս օտար մարդ բաների մէջ, նա ամենայն բանի մէջ գտանում հին ծանօթներ, նա ըմբռնում նոր բանց Յաւիտենականի տեսակի տակ, և այս ըմբռնողութիւնը է բաների ճանաչողութիւնը: Այս գիտակցութիւնը Աստուծոյ գոյութեան բովանդակում իւր մէջ և տալիս է Քրիստոնէութիւնը: Նորա պարունակութիւնը է նոյն իսկ բացարձակ ճշմարտութեան պարունակութիւնը, և ինչպէս քրիստոնէութեամբ մնել է բովանդակ մարդկութեան մէջ ճանաչողութիւնը — ճանաչողութիւն Աստուծոյ և բոլոր արարածների, նոյնպէս Քրիստոնէութեան միջնորդով հաստատում և անհատ մարդուն ճշմարտութեան և ճանաչողութեան հոգին, որ առաջնորդում նորան դէպ ի ամենայն ճշմարտութիւն: Ինչ մարդու սրտում ծագել է ճշմարտութեան արեգակը սիրելիքի արարչի մէջ, նա կը գտանէ նորա ճառագայթները և ամենայն բանի մէջ և ուրախանալու է յաւիտենական լոյս վերայ, որ լուսաւորում ամենայն խաւար: Ով որ ճանաչում և հաւատում թէ Աստուած սէր է, թէ նա իրրև Հայր ի յաւիտենից սիրում իւր միածին Որդին, իւր գոյութեան կատարեալ յայտնութիւնը, և թէ Նա սիրվում Սիրոյ Որդու կողմից և թէ երկուքը մի են սիրոյ հոգու մէջ. ով որ ճանաչում և հաւատում, որ Հայր Աստուծոյ, իրրև Բարչից, ստեղծուած են ամենայն մարդիկ և թէ նորա Որդու, իրրև Փրկչի, մէջ, վերադառնալու են առ Աստուած և հաւատի հոգով, Որդով Հոգուով, լուսաւորուելու, սրբուելու և պայծառակերպուելու են. ով որ հաւատացել է, ճանաչել է և ստուգել է, թէ մարդս նորանով միայն կարող է կոչում լինել յաւիտենական ճշմարտութեանը և յաւիտենական կեանքին, որ իւր սրտի ծնունդը խնամարհիներով Աստուծոյ սրբութեան և արդարութեան առաջև, ճանաչում իւր ոչնչութիւնը, որ նա հաւատալով մարդկութեան փրկութիւնը Քրիս-

տոսով, յանձնումէ իւր անձը Աստուծոյ շնորհին, որ և հաղորդութեամբ Հոգւոյն սրբոյ հետ դառնումէ մի նոր արարած. ով որ դիտէ այս և հաւատումէ, նա գտել է դորանով յաւիտենական ճշմարտութիւնը և սկզբնատիպը ամենայն ճշմարտութեան, որ յետոյ պիտի առաջնորդէ նորան դէպ ի ամենայն ճշմարտութիւն:

Բայց այս հաւատը դէպ ի յաւիտենական ճշմարտութիւնը և այս ճանաչողութիւնը նորա, տալիս է քրիստոնէական ուսումը և այդ ճշմարտութիւնը է այս ուսման պարունակութիւնը: Մեծապէս ընդունակ է ամենայն մարդ այս պարունակութեան, որովհետեւ նորա մէջ առաջնակայ ու ներկայ է մարդկային հոգու ամենաներքին պիտոյքը. բայց ընդունակութիւնը զգալու այդ պիտոյքը և լցուցանելու դորան, զարթնումէ այն ժամանակ, երբ որ քրիստոնէական պարունակութիւնը պատշաճաւոր ձեւով մատուցանվումէ նորան, երբ որ նա դաստիարակվումէ քրիստոնէական կրօնի մէջ: Բայց թէ ո՛րն է մի ազգային վերին դպրոցի յարմարաւոր ձեւը և եղանակը, որով քրիստոնէական կրօնի ուսումը պիտի աւանդուէր աշակերտներին, դորա վերայ պիտոյ է մեզ այժմ խօսել, միտ դնելով նիւթի մեծակշիռ կարեւորութեանը:

Գիտոյ է Քրիստոնէական կրօնի մէջ, որ ուսմամբ աւանդվումէ, այո՛, առհասարակ, ներս է մտանում մարդկային մտքի գիտակցութեան մէջ, որոշել միմեանցից պարունակութիւն և ձեւ: Քրիստոնէական ճշմարտութեան պարունակութիւնը մնումէ միշտ և յաւիտեան մի և նոյն, իսկ ձեւը և կերպը, որով այս միշտ հաւատալի պարունակութիւնը դոյութիւն է ստանում մարդկային խղճի մէջ, զարգանումէ նոյնպիսի աճողութեամբ, որպիսի աճողութեամբ մարդկային հոգին աստիճան առ աստիճան յառաջ է խաղում: Քրիստոնէական կրօնի պարունակութիւնը կարելի է նոյնպէս անուանել նորա ասպուածնչէն շարժարանը, իսկ ձեւն ու կերպը, որով մարդս միջնորդելով ստանումէ այդ պարունակութիւնը, կարելի է ասել մարդկեղէն շարժարանը: Աստուածեղէն շարժարանը մնումէ բոլոր փոփոխութիւններին մէջ ամենևին անփոփոխ, թէև շատ ու շատ մեծ լինելը խմացական յառաջադիմութիւնը. դորա հակառակ, մարդկեղէն շարժարանը է այն, որ յառաջ է խաղում, անդադարակս կերպարանափոխ է լինում և կախ է մարդկային հոգու ժամանակաւոր բարդաւաճանքից: Ինչպէս կենդանի տունկը աճումէ առ աստիճան զարգանումէ և հետ գնեալ ամենումէ ար-

մաս և առեղն, տերևները, ծաղիկները և պտուղները, և ի վերջոյ զարձնալ ծնուցանումն նոյն սերմը, ուստի բղխել էր, և ամենզու-զութեամբ փոխոխուելով իսկ, այնու ամենայնիւ մնումն մի և նոյն առնկը, այո՛, սոյն այս փոփոխական յայտնութիւնների մէջ ցուցանումն իւր գոյութեան անեղը կենդանութիւնը. այսպիսի թէև անհամեմատ աւելի վերին կերպով ձևանումն իրը և այս բանի մէջ: Վրիստոնէական ճշմարտութեան անեղը պարունակութիւնը մնումն միշտ և ամենևին մի և նոյն և չէ ենթարկուած ոչինչ փոփոխութեան: Ինչ որ միանգամ ճշմարիտ է, մնումն և ճշմարիտ յաւիտեան յաւիտենից: Բայց անվախճան պարունակութեան պատճառով իսկապես ծնանումն անվախճան յառաջադիմութիւնը ձևերի մէջ: Նոցա անվախճանութիւնը յայտնվումն այն բանի մէջ իսկապես, որ յայտնութիւնքը անդադար միևնոյն միւսին հերքումեն: Մի անվախճան էակ ոչինչ որոշեալ ձևով կարող չէ բացայայտել իւր իսկութիւնը և ապացուցանումն իւր անվախճանութիւնը այն բանով, որ հետ ղհետէ վերացնումն իւր վախճանական ձևը: Զևերի անվախճան հոսականութեան մէջ յայտնվումն պարունակութեան անվախճանութիւնը. բայց այս ձևերի ամեն միևնոյն մէջ յայտնվումն լիամանութեամբ, բոլորապատուղ, անվախճան պարունակութիւնը: Եթէ ձևը չլինէր այնպէս, որ նորա մէջ ճանաչէինք լիակատար, անպղտոր և միշտ անփոփոխ պարունակութիւնը, ապա չէր լինելու պարունակութեանը հաւատար և այդպէս բնապատկանելու չէր այն ձևերի հարկաւոր շրջանակութեանը, որով յաւիտենական պարունակութիւնը իրագործվումն ստեղծման աստեղծման յառաջ խաղալով: Վրիստոնէական կրօնը հիմնադրեցաւ պատմութեան մէջ, այո՛, նոյն իսկ անհատ, զարգացող մարդու մէջ կատարումն նա մի ձիգ ընթացք ձևերի, և ամեն միևնոյն այս ձևերից կարող է լինել հարկաւոր և յարմարաւոր, յանդիման կացուցանելու պարունակութիւնը: Բայց այդպիսի է ձևը, երբ որ, արդարև, նորա մէջ ճանաչվումն լիակատար, մաքուր պարունակութիւնը: Նորա հակառակ, գտանվումեն և անկրաւ, պատահական ձևեր, որ Վրիստոնէական պարունակութիւնը ստացել է այս և այն անհատների, այո՛, ամբողջ ժամանակամիջոցների մէջ: Պոքա են այնպիսի ձևեր, որոց մէջ կարելի չէ ճանաչել պարունակութիւնը, կամ թէ միայն ճանաչելի է ամենևին ոգեղացուցած կերպարանքի տակ: Պոքա են ձևեր, որ հաւասար չեն պա-

յոնակութեանը: Իւրաքանչիւր առողջ մարդ է մի առանձին ձևը ընդհանուր մարդկային կերպարանքի. բոլոր մարդկային կերպարանքների մէջ, եթէ առողջ կին դրքա, ճանաչելի է իսկոյն մի կատարելապէս առողջ յանդիմանութիւն մարդկային կերպարանքի առ հասարակ: Բայց կան մարդկային կերպարանքների մէջ և անդամալոյծք, գալշելի, այլանդակուած դէմքեր, կերպարանքներ, որոց պակաս էր մի անդամը, կամ որ չար կործանիչ հիւանդութեամբ այնպէս սաստիկ ոգեղացած կին, որ ողբալի էր նոցա վերայ նայել: Այսպէս ևս այն ձևերի մէջ, որ քրիստոնէական կրօնի պարունակութիւնը ստացել է, կան անդամալոյծ, ոգեղատեսիլ, արդարև ցաւեցուցիչ և թշուառ ձևեր, ձևեր, որ պարունակութիւնը բացայայտումն ամենևին ոգեղ և անհերթեթ կերպով:

Ա՛ն որոյ, որչափ հարկաւոր էր աչքի առաջև ունենալ այն վերևում դուրս դրած հայեցողական կէտը, որ ցոյց տուեց մեզ Քրիստոնէական ձևերի անվերջ բազմօրինակութիւնը, աչքի առաջև ունենալ, որ մի գուցէ ընկնէինք մի նեղսիրտ միակողմանութեան մէջ և համարէինք մի ձևը ամենակատարեալը և նորա չափով չափէինք միւս ձևերը, փոխանակ բոլոր ձևերը չափելու մշանջենաւոր պարունակութեան չափով. նոյնքան ևս հարկաւոր է, այն ոգեղացուցած և այլանդակուած ձևերը, որ տալիս են իւրեանց նոյնպէս Քրիստոնէութեան անուն, ճանաչել և տարբերել ճշմարիտ ձևերից: Բայց Քրիստոնէութեան միշտ անփոփոխ պարունակութիւնը, որով հարկաւոր է կշռել և դատել նորա բոլոր առանձին ձևերի ճշմարտութիւնը կամ խաբէայութիւնը, բովանդակուած է Աստուածաշունչ մատենի, յատկապէս Նոր կտակարանի մէջ:

Նոր կտակարանը է Աստուծոյ բանը: Նա է մշանջենաւոր, անփոփոխելի, մի և նոյն պարունակութիւնը ճշմարտութեան, որ իւր անվախճանութեան և անսպառութեան պատճառով օրէ օր նոր ի նորոյ և աւելի գեղեցիկ կերպարանվօք եկեղեցական պատմութեան, այո՛, սոյն մի անհատ մարդու մէջ, որ է եկեղեցական պատմութեան փոքրիկ աշխարհը: Ուրեմն Քրիստոնէութեան իւրաքանչիւր ձևը, որոյ մէջ ճանաչվում Աստուածանի պարունակութիւնը, է մի ճշմարիտ և հարկաւոր ձև, և իւրաքանչիւր ձև, որ համձայն չէ Աստուածանի պարունակութեանը, սուտ է: Ինչ որ նոր կտակարանը Աստուծոյ խոսքեան և դէպ ի մարդկութիւնը

յարաբերութեան մասին ասում է, է կատարեալ ճշմարտութիւն։ Ինչն ճշմարտութեան հոգին ասել է այդ, և ճշմարտութեան հոգին, ուր որ դա կայ, խոստովանելու էր Աւետարանի բանը, իբրև իւր հաւասարը։ Ինչ որ Նոր կտակարանը Աստուծոյ մասին ուսուցանում է, ոչ թէ միայն ճշմարիտ է մի հատ մարդու, այլ բոլոր մարդկերի մասին, ոչ թէ լոկ մի ժամանակի, այլ բոլոր ժամանակների համար ճշմարիտ, ոչ թէ լոկ այս կեանքիս, այլև, հանդերձեալ կեանքի համար ճշմարիտ. դա է բոլոր հասակների, ժամանակների, մարդկերի համար ճշմարիտ, դա է բացարձակ ճշմարիտ, որովհետև ճշմարիտ է նոյն ինքն Աստուծոյ մասին։ Բայց ի՞նչ է ասում սուրբ գիրքը իբրև պարունակութիւն ճշմարտութեան։ Շատ բան է ասում նա. ո՛վ կարող էր այդ բոլորը ամփոփել յիշողութեան մէջ։ Բայց այդ բոլոր շատ բաները, որ նա ասում է, հաւաքվում են և ամփոփվում են մի հատ վառողական կէտի (ֆոկուսի) մէջ։ Ամենայն խօսք, որ նա ասում է, է մի ճառագայթ և բոլոր ճառագայթները հանդիպում են միմեանց մի հատ կէտի մէջ և բղխում են մի հատ տղբից։ Այդ մեծ և հոյակապ խօսքը, ուստի հարկաւորապէս հետևում է բոլոր առանձնականը, է. Ա՛փո՛ւռ սէր է։ Նա ինքն իւր մէջ ի յաւիտենից սէր է, վասն որոյ և ի յաւիտենից ունի մի ամենևին իւրեան հաւասար առարկայ սիրոյ, որոյ հետ մին է սիրոյ կատարեալ հոգովը. այսինքն Աստուած, իբրև ամենակատար սէր, է միաժանական սուրբ Երրորդութիւն։ Եւ ինչպէս Աստուած ինքն իւր մէջ, իւր էութեան մէջ սէր է, նոյնպիսի է նաև իւրեանից դուրս, իւր գործերի մէջ։ Նա ստեղծել է աշխարհը առ ի սիրոյ, նա առաջնորդում է ստեղծագործած աշխարհին դարձեալ դէպ ի ինքը, առ ի սիրոյ փրկութեան գործի մէջ. Նա ամենայն բանի մէջ խորամուխ է իւր հոգով և ամենայն բան կատարելագործում է իւր հոգով, սրբելով նորան։ Ուրեմն, Աստուծոյ Երրորդութիւնը իւր ինքեան մէջ — Սիրոյ Աստուծոյ երրորդութիւնը յայտնվում է իւր արարչագործութեան, փրկագործութեան և սրբագործութեան մէջ։ Եւ ինչպէս Աստուած իւր ինքեան մէջ և իւր գործերի մէջ է կատարեալ սէր, նոյնպէս կամի նա, որ նորա պատկերի նմանութիւնը, մարդս, լինի նոյնպէս սէր. վասն որոյ և բոլոր պատուիրանները, որ սուրբ գիրքը տալիս է մարդուս, ամփոփվում են այս մի խօսքի մէջ, որ է Սէր. Պէտք պիտոյ է սիրել Աստուած քո ամենայն սրտից և քո ա-

մենայն զօրութենից, և քո ընկերը իբրև քո անձը : Աւետարանը քարոզումէ ոչ այլ ինչ, բայց սէր. թէ Աստուած սէր է և թէ այս պատճառով մարդս պիտի սիրէ: Եւ սա է բացարձակ ճշմարտութեան պարունակութիւնը, և բոլոր ձև ու կերպարանքը, որ քրիստոնէութիւնը տալիս է իւրեան, այն ժամանակ միայն ճշմարիտ են, երբ որ նոցանից լուսափայլումէ այս մի բանս, ուրեմն, երբ որ նա համաձայն է Աստուածաշնչին, որ քարոզումէ այս մի հատ բանը:

Այնպէս և հարկաւոր է, որ հայկական մայր դպրոցի մէջ, սկսեալ ամենաստորին դասատնից մինչև ամենավերինը, կրօնի դասատուութեան մէջ ոչինչ չուսուցանուի, բայց միայն նոյն միշտ ճշմարիտ քրիստոնէական պարունակութիւնը, որ գրած է նոր կտակարանի գրուածներուն մէջ: Աստուածաշունչը, մանաւանդ նոր կտակարանը կազմումէ բացարձակ հիմքը դասատուութեան: Կրօնի դասատուութիւնը նոյն չափով ու կշռով բարւոք է, որ չափով ու կշռով նա համաձայն է Աստուածաշնչին: Բայց նոյնպէս հարկաւոր է, որ դասատուութիւնը, միտ դնելով զանազան դասատներին և կրթութեան աստիճաններին, և զանազան ձևով աւանդէ կրօնի ուսումը: Եթէ կամէր ուսուցիչը վերին դասատներին աշակերտներին աւանդել կրօնի ուսումը տակաւին հարց ու պատասխանի ոճով . դորանով այնքան ևս սառնացնելու էր նոցա սիրտը դէպ ի կրօնը, ոլքան դարձեալ սա ստորին դասատներին աշակերտներին անհասկանալի և անպէտ շինուելու էր, եթէ աւանդուէր նոցա գիտնական շարադրութեամբ:

Կրօնի դասատուութիւնը Հայոց մայր դպրոցի մէջ, որպէս իւրաքանչիւր այլ դասատուութիւն պիտի բաժանուէր երկու աստիճանակարգ: Ստորին դասատներում կը լինէր նա ուսումն հարց ու պատասխանի ոճով . իսկ վերին դասատներում բանաւոր կերպով: Երբ որ կրօնի ուսումը հարց ու պատասխանի ոճով աւարտուած էր, այնուհետև կը սկսանուէր բանաւոր դասատուութիւնը: Հարց ու պատասխանի ոճով դասատուութիւնը ունի այն խորհուրդը, որ աշակերտը աւհասարակ նախ ծանօթանայ քրիստոնէական ճշմարտութեանը և նորա պատմութեանը, որ նա հասկանայ որոշ որոշ ճշմարտութիւնների միտքը, որ նա տպաւորէ իւր շողոքութեան մէջ ամենակարևոր ճշմարտութիւնքը, որ նորա սիրտը չերմանայ ոգոյնով: Հարց ու պատասխանի ոճով դասատուու-

թիւնը տալիս է տեղեկութիւն քրիստոնէական կրօնի բոլոր պարու-
թեանը, բայց ոչ կիրառութիւն տակաւին: Հայց ու պատասխանի
դատաստութեամբ ընդունում աշակերտը կրօնի որոշ որոշ պատ-
մութիւնքը և վարդապետութիւնքը, նա հասկանում նոցա բա-
ռացի միտքը, տպաւորում նորանց իւր յիշողութեան մէջ և — որ
դլխաւոր բանն է — ձայնակցում նոցա դգացողութեամբ: Այս
պատճառով հայց ու պատասխանի ոճով դատաստութիւնը է մի
կողմից շատ արտաքին, միւս կողմից շատ ներքին բան: Շատ ար-
տաքին, այն մտքով, որ նա հայում դէպ ի փորձական կերպով
պարունակութիւնը. շատ ներքին, որովհետև դգացողութիւնը
շարժվում դորանով: Հայց ու պատասխանի մէջ աշակերտը տա-
կաւին չէ հասկանում այն վարդապետութիւնքը, որ նա ուսա-
նում և ոչ իսկ փորձով կարող էր ստուգել այդ հասակում, բայց
արդարև, զդում նոցա ճշմարտութիւնը: Քրիստոնէական ճշմար-
տութիւնքը այնչափ մեծապէս համապատասխան են մարդկային հո-
գու ներքին պիտոյքին, որ և երեխայի մէջ դտանում շատ յօ-
ժարամիտ հաւանութիւն: Երէ երեխան սիրում իւր ծնողքը և
ուսուցիչքը և ամենայն օր դտանում նոցա սէրը, և այդ սաց-
ուածով ներջանիկ է համարում իւր անձը, և երէ նա կրօնական
ուսմամբ տեղեկանում, որ Աստուած բոլորովին և ամենևին սէր
է, որ նա ամենայն մարդիկ այնպիսի քաղցր սիրով սիրում, ինչ-
պէս ոչ մի հայր իւր զաւակները, և երէ նա այս անչափելի սի-
րուց պարգևում մեզ ամենայն բան, ինչ որ մենք ունինք, այո՛,
նա իւր անքննելի սիրով ուզարկել է իւր միածին Որդին մեր փրը-
կութեան համար. այս բոլորս պատշաճաւոր կերպով նորա աչքի
առաջև կացուցած, այնպիսի խոր տպաւորութիւնք կը դործէ նորա
սրտի վերայ, որ նա յօժարութեամբ հաւատալու էր բոլոր ասած-
ներին, որովհետև դրքա անչափ փառաւոր և արժանահաւատ բա-
ներ էին: Այսպէս է բանը Քրիստոնէութեան և միւս ուսմունքի և
պատմութիւնների մասին. նորա դտանումն մի անմիջական հա-
ւանութիւն երեխայի սրտի մէջ: Ոչ ապաքէն երեխայական հա-
տակը է հաւատալու հատակը: Երկմտութիւնը հետև է դրած երե-
խայից. դա սկսանվում այն ժամանակ միայն, երբ զարդանում
միտքը: Երեխան հաւատում ասած խօսքին, որովհետև դա տա-
վում իւր հօր և ուսուցչի բերանով. բայց ոչ թէ լոկ հաւատում
նա, այլև զդում հաւատացած բանը տա. ի սրտէ և խորութեամբ,

որովհետև դա ամենևին կատարելապէս համապատշաճ էր իւր ա-
մենատոյգ զգայողութեանը: Անհատորապէս քննել և հիմնա-
ւորել վարդապետութիւնքը, դէմ յանդիման կացուցանել նոցա
կապակցութիւնը, լինելու է այս հատակի մէջ ամենևին անհա-
կանալի և ամենևին անպատշաճ, որովհետև մանուկը տակաւին
կարօտ չէ դորան: Այս կարօտութիւնը, բանաւորապէս հասկա-
նալու կրօնական ճշմարտութիւնքը, յաւելի է ասել, միտ դնելով
մեր այժմեան շատ թերի և շատ չքաւոր կանոնի դաստիարակու-
թեանը, Եւրոպայում իսկ, սովորաբար չէ զարթնում երբէք կա-
նոնի սեռի մէջ, իսկ այրական սեռի մէջ այն միջոցին միայն, երբ
մանուկը փոխանցում դէպ ի պատանեկութեան հատակը: Այս
տեղ զարթնում ձգտողութիւնը դէպ ի ազատութիւն, և այս
ինքնիշխանութիւնը յարձակվում ամենայն բանի վերայ, ինչ որ
մարդս մտածում և գործում, նա յարձակվում նոյնպէս կրօնի
ուսման վերայ: Պատանեկութեան հատակում մարդս ունի ձգտո-
ղութիւն, ասես թէ, աշխարհը ստեղծագործելու իւր միջից դէպ ի
դուրս: Ընդունել մի բան արտաքին վկայութեամբ չկամի այլևս
պատանին. նա կամի ամենայն բանի մէջ ինքն գործունեայ և հաս-
կացող կերպով ներկայ լինել:

Ուր եթէ այս ստիպողին ձգտողութիւնը դէպ ի ինքնիշխա-
նութիւն սեփական է արդէն պատանեկութեան հատակին առհա-
սարակ, դա լուսավայրում ամենայն զօրութեամբ ուսումնասէր
երիտասարդի մէջ: Նորա բոլոր գործունէութիւնը ուղղեցուցած
է դէպ ի դիտութիւն և դէպ ի գիտական կրթութիւն: Ամենայն
բան նորա մէջ կերպարանվում իբրև դիտութիւն: Ուրեմն, մեք
պիտի ամենևին անդիտանայինք նորա էութիւնը, եթէ կամենա-
յինք մատուցանել նորան կրօնը իբրև մի լոկ, նորա զգայողու-
թեանը պատշաճաւոր և նորան հաւատալի պարտնակութիւն.
ոչ. այլ մանաւանդ կրօնական պարտնակութիւնը պիտի կերպա-
րանուի նորա կրթութեանը յարմարաւոր ձևով: Կրօնի ուսումը
այժմ պիտի ցոյց տայ բանաւոր կապակցութիւնը առանձին վար-
դապետութիւնների և պատմութիւնների: Այն կրօնական պա-
րտնակութեանը, որին աշակերտի զգայողութիւնը վաղուց արդէն
տուել է իւր հաւանութիւնը, պիտի այժմ և հասկացողութիւնը
տայ իւր հաւանութիւնը: Եթէ այսպէս չեղաւ, եթէ երիտասարդի
ճանաչողական ձգտողութեանը ուշադիր չեղանք, եթէ միշտ ու-

ղարկէինք նորան դէպ ի իւր զգացողութիւնը միայն, և նորանից սա հանջէինք, որ նա լոկ հաւատար, ինչ որ ցանկալի էր նորան հասկանալ, այնուհետև ճնանումէ երկպատակութիւն մտքի ու զգացողութեան մէջ: Եւ ի՛նչպէս է դորա հետևանքը. եթէ երևոյթները չունեն այնքան զօրութիւն, որ ինքնին հասկացողութեան կարիքը լրացնէ, առանց հրաժարուելու իւր զգացողութենից, այնուհետև դառնումէ նա անկրօն. պատճառ, նա դատնումէ հասկացողութեան ասպնձանի վերայ: Հասկացողութիւնը է նորա դերակշիռ շարժառիթը, բայց երբ որ հասկացողութեան և զգայողութեան պահանջողութիւնքը ընկնումեն հակառակութեան մէջ, նա հետևումէ հասկացողութեանը և ոչ թէ զգացողութեանը: Այս պատճառով, արդարև, եթէ կրօնի դաստատութեան ամենամեծ սխալանքը, այն, մի կատարեալ դատաճանութիւն ընդդէմ կրօնի, այն է, որ ուսուցիչը նախապատիւ ընտրելով մի վերացական, նիւթական հասկացողութիւն, որ չունի իւր մէջ ոչինչ բանական ուժութիւն, բայց է թողում քրիստոնէական կրօնի բանական, աստուածեղէն պարունակութիւնը և դորա փոխանակ առաջարկումէ մի թշուառ և դատարկ մարդկային իմաստութիւն, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ յիմարութիւն. նոյնքան մեծ սխալանք է և ցուցանումէ մի բոլորովին անիմաստութիւն և տգիտութիւն մարդկային բնութեան, երբ բանական տարրը չէ ընդունվում երկնատարդի կրօնական դաստիարակութեան մէջ: Քրիստոնէական կրօնը ինքնին է ամենախորին բանականութիւնը և ամենատարբ հասկացողութիւնը, վասն որոյ նորա ճանաչելի տարրերքը պիտոյ է միայն նորա միջից դէպ ի վեր մատուցանուին և բացափայլեն, որպէս զի կրօնը լրացնի, և ճանաչող երիտասարդի ամենախորին պիտոյքը, ինչպէս լրացնումէր զգացող մանուկի պիտոյքը: Այսպէս և կրօնի դաստատութիւնը մի հայկական մեծ դպրոցի մէջ պիտի ունենայ մի երկրորդ, կատեխիզական դաստատութեան սահմանից յառաջդնացող բանաւոր ասպնձան, եթէ չպիտի անխորհուրդ, այլ, առնչի ձևանոտ լինելը կրօնի սրհամարհութեան, քան թէ պիտոյը հոգևորելու նորանով: Բայց այս բանաւոր դաստատութիւնը կրօնի կարող չէր տակաւին դատնալ մի կրօնական դիտութիւն, որպէս նա չէ և կատեխիզական դաստատութիւն: Բանաւոր դաստատութիւնը կրօնի ունի և կը պահպանէ միշտ մի պատմական հիմք. ստուգապէս աստուածաշունչն կամ թէ եկեղեցու դա-

ւանութեան մէջ տուած պարտնակութիւնը տալու էր առաջնորդական ուղղութիւնը. այս պարտնակութիւնը պիտի բացատրուի այնպէս, որ մնածութիւնը կարողանայ ներս ընդունել նորան: Ա՛յս պարտնակութեան բանաւոր կապակցութիւնը պիտի լուսաւիայլ կացուցանուի: Թէլը, որ բոլոր առանձնական բանները շաղկապով կազմուած մի ամբողջութիւն, պիտի տրուի աշակերտի ձեռքում:

Բայց կրօնի դիտութիւնը, որ կարող է մի հոգեւոր ակադեմիա ուսուցանել տիրական աստուածաբանին, բաժանվում պատմաբանաբար տուած նիւթից: Նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի բուն դիտութիւն և կերպարանագործում իւր պարտնակութիւնը մի հատ հիմքից, փիլիսոփայական հարկաւորութեամբ: Երդ՛պէս, կարող էր համարուիլ մի արտաքին ապացոյց ճշմարտութեան կամ խաբեբայութեան, արդեօք կրօնի դիտութեան ուսմունքը համաձա՞յն էին Յայտնութեան մէջ գրած ուսմունքին, թէ տալիս էին այլ եզրակացութիւնք, դոր օրինակ մի բնագիտութեան ճշմարտութիւն ստուգվում այն արտաքին և աներկմիտ յայտարար նշանով, որ նորա վարդապետութիւնքը համաձայն են բնութեան յայտնութիւններին. բայց կրօնի դիտութիւնը ինքն իւր մէջ չունի համաձայնութիւն ուշադիր լինելու մի պատմական հիմքի, այլ պարտ է նա կերպարանագործիլ ինքն իւր մէջ և իւրեանից դէպ ի դուրս, առանց արտաքուստ ընդունելու կամ ներս բերելու մի բան:

Հարկաւոր է լաւ միտ առնուլ այս կարևոր խոհը, որ կայ դիտական դպրոցական դաստիարակութեան և տիրական դիտութեան մէջ: Ա՛յս պատճառով կամենք մեք յայտնել այս տեղ այսքան միայն, որ կրօնական դաստիարակութիւնը տղոցին մայր դպրոցի մէջ չունի տակաւին համաձայնութիւն, խորութիւն առնելու Պատանաբանութեան և Խորոյաբանութեան մէջ, եթէ չկամէր նա բայց թողուլ իւր ճշմարիտ հայեցողական կէտը, վասն որոյ և անպատեղ դառնալ: Պատանաբանութիւնը է ուսումնական ճանաչողութիւնը հատատի, իսկ բարոյաբանութիւնը ուսումնական ճանաչողութիւնը հիմնական կանոնների, որ պիտի առաջնորդին մարդկային գործողութեանը, բայց այս բաժանութիւնը հատատի ու գործի մէջ տեղ չունի կրօնի սահմանում: Հատատը դէպ ի Աստուած, նորա գոյութիւնը, նորա սէրը, և որա սիրոյ գործերը, անմիջապար ծնուցանում սէրը առ նա և

սէրը դէպ ի Աստուած է բոլոր մարդկային գործողութեան ճշմարիտ հիմնական կանոնը: Կարելի չէ հաւատալ Աստուած և ճանաչել Աստուած առանց սիրելու նորան, և անկարելի է սիրել Աստուած, առանց ղգալու իւր մէջ յօժարութիւն հաւատալու նորա բանը և օրէ օր աւելի կատարելապէս ճանաչելու նորա գոյութիւնը: Կրօնի մէջ հաւատ ու սէր, ճանաչողութիւն և գործ մին են, և նոյնքան ևս անհնարին է բաժանել միմեանցից այդ երկուքը: Խովանդակ մարդկային հոգին, թէ նորա միտհայեցական շարժառիթը և թէ գործականը, կրօնական դաստիարակութեան մէջ կենագործվում և զտանում իւր յատուկը. նա կարող չէ բաժանել այդ շարժառիթը, առանց վերացնելու կրօնական դաստիարակութիւնը: Այս վերացական ըմբռնողութիւնը շարժառիթների է գիտութեան պաշտօնը և գիտութիւնը իրրև գիտութիւն չէ պատկանում մի դիմնադրական դպրոցի: Կրօնական դաստիարակութիւնը է ենթակայի (անձնի) հաւատը, որ ստանում այդ դաստիարակութիւնը. նա ունի մի ենթակայական (անձնաւորական) խորհուրդ. աշակերտը, նորա ճանաչողութիւնը և նորա սիրտը պիտի ստանան պատշաճաւոր հայեացք դէպ ի Աստուած, բայց գիտութեան մէջ, այլևս խօսք չկայ ենթակայի կրթութեան վերայ. գիտութիւնը ունի իւր սեփական խնդիրը:

Կրօնը է տակաւին ենթակայի գործը և ունի իւր արմատը սրտի մէջ, վասն որոյ և կրօնի շարժառիթը, որպէս հաւատ և սէր, գտանվում են անպղտոր միութեան մէջ, այսինքն ենթակայի միութեան մէջ — ենթակայի, որ ունի կրօն: Բայց գիտութեան մէջ կրօնական պարունակութիւնը լուծվում ենթակայութենից (անձնաւորութենից) և սրտից, և գիտութեան վերացական հայեացքի մէջ բաժան բաժան դուրս են գալիս պարունակութեան մասները, որ տիրական կրօնի տահմանում անբաժան մին էին անձնաւորութեան մէջ: Այս պատճառով կրօնը, գտնելով գիտութիւն, որոշվում դաւանաբանութիւն և բարոյաբանութիւն: Վասն որոյ և այս բաժանումը պատմութեան մէջ կարող է այն տեղ միայն դուրս ելնել, ուր բուն գիտութիւնը այնքան զօրացած ու ինքնիշխան էր դարձել, որ այնուհետև հարկաւոր չէր հաստատուել ենթակայութեան վերայ: Բայց որովհետև մի դիմնադրական դպրոցի մէջ կրօնի դաստատութիւնը հաստատում չէ այս գիտական առարկայականութեանը և վերացականութեանը և սա մնաւանդ

պիտի լինէր հետևանքը դիմնադրական կրթութեան, վասն որոյ դիմնադրական դպրոցի մէջ տակաւին անտեղի է կրօնի որոշումը դէպ ի դաւանաբանութիւն և բարոյաբանութիւն: Ուրեմն տիրապէս դիտական տեղեկութիւնը կրօնի ամենայն կերպով որոշ-վումէ բանաւոր կրօնական դաստատութենից, ինչպէս սա դարձեալ որոշվումէ կատեխիզական դաստատութենից: Կարելի էր այս երկու ոճքը դաստատութեան այսպէս ևս որոշել միմեանցից, եթէ ասէինք, թէ կատեխիզական ոճը տալիս է կրօնական զգացողութեանը մարմին, կրօնական գաղափարների մէջ, իսկ բանաւոր դաստատութիւնը զարդացնումէ կրօնական գաղափարների մէջ կապակցութիւնը մտքերի, և դիտութիւնը կրօնի գործունեայ է հաստատող մտախոհութեան մէջ:

Բայց դիմնադրական դպրոցին պատշաճաւոր է միայն կատեխիզական դաստատութիւնը և բանաւոր դաստատութիւնը: Առաջինը հասանումէ երեք ստորին դասատներին, երկրորդը երեք վերին դասատներին, ենթադրելով, որ վերին դասատների ընդհատը էին երկու երկու տարի տևողութեամբ կարգուած:

Կրօնի ուսումը և դաստատութիւնը, ինչպէս ամենայն առարկայի ուսում և դաստատութիւն մնացել է Հայերի մէջ իւր խորին տղայութեան հասակում: Ո՛չ մանուկների և ոչ չափահասների կրօնական դաստիարակութեան համար չկայ ոչինչ հոգեբարձութիւն. այդ տեղ քրիստոնէական կրօնի պարունակութիւնը դարձել է մի քանի դաւանաբանական հիմքեր և մի քանի հնշան լսուցանելի արտաքին կարգեր: Մի դիտութիւն կրօնի բանաւորապէս ըմբռնելով նորա էութիւնը և մանաւորելով աշակերտին, մի դիտութիւն կրօնի, որով փառաւորել են հայկական եկեղեցին մեր երանաշնորհ հարքը, զոր օրինակ մի Ներսէս Շնորհալի, մի բազմահայեաց ուսումնական և պայծառ մտածող ու տեսնաբանող Լամբրոնացի. մի դիտութիւն կրօնի, ինչպէս գորան հասկանում են այժմեան Եւրոպայի խորաքննին աստուածաբանքը—մի անգոյ բան է այժմեան հայկական սերունդի մէջ: Բայց ինչ որ չունին Հայը այսօր, կարող են ունենալ մի օր, եթէ կամենային և հաստատապէս կամենային, հոգով ու սրտով կամենային. այնուհետև ձեռքն ևս, որ մինչև այժմ մնացել են անգործ դրած դռան բոլորի, կը լսուցանեին իւրեանց գործին, աստուածային վաստակը:

Ս. Նազարեանց.

(Շարունակութիւնը յետոյ.)

ՄԱՐԴՈՒՆ ՍԻՐՏԸ

(Հանած Դօքտոր Լուի Բիւխների գրուածէից մակագրութեամբս *Physiologische Bilder*. I հատ. Լէյպցիգ.)

«Ուղիղ հասկացողութիւնը կեանքի, է առաջին խնդիրը, որ պիտոյ է առաջարկուի ոչ թէ միայն կրթեալ բժշկին, այլև կրթեալ մարդուն. պատճառ, ոյր որ միայն ուսել է մի կենդանի գիտութիւն նախամեծար պատուել, քան թէ մի անպտուղ ուսումնականութիւն, նա վկայումէ իր սրտի խորին խոստովանութեամբ, թէ ճըշմարտութիւնը պատկանումէ բոլոր ժողովրդին և ոչ այլևս նորա որ և իցէ առանձնական դասակարգին»։

Մարդու սիրտը է փոքրիկ նաւ,
Դաւում է միշտ և անդադար,
Իր հետ վայելք, նոյնպէս և ցաւ,
Դէպ ի յուսոյ գալոց աշխարհ։

Սիրտը — օրգիսի մեծակշռու, շատ անգամ բերանից հանած խօսք։ Վհանի՛ քանի մոռացութիւնք, մոռահայեաց տեսութիւնք, խմացութիւնք կուտակվումեն մին մինի վերայ մեր հոգու աչքի առաջև, երբ որ գորա անունը տալիս են. ի՛նչ ճոխ և առատ չիշատակներ զարթեցնումէ դա մեր մէջ։ Աբդիօք եղած է մեր կեանքի մէջ մի բոպէ, որին դա այս կամ այն կերպով մոտնակից եղած չլինելը։ Մի՞ թէ այդ սրտով չենք սիրել, արտասուել, յուսացել և — տուել. մի՞ թէ գորա անունը հազար անգամ արտասանել չենք, ցոյց տալու համար, թէ ի՛նչ բան կեանքի շատ զանազան որպիսութիւնների մէջ շարժել է մեր ներքինքը։

Այնու ամենայնիւ մեք շատ փոքր կամ թէ երբէք առաջարկել չենք մեզ այն հարցը, արդեօք ի՞նչ էր յատկապէս այդ կարեւոր, մեր կեանքի մէջ այնքան մեծ պաշտօն ցուցանող բանը: Եւ արդարեւ, այդ հարցի պատասխանը այնպէս հեշտ չէ, ինչպէս առաջին անգամն երեւումէր: Պատճառ, ինչպէս շատ ու շատ զանազան պիտի ձեւանայր այդ պատասխանը, միա դնելով այն մարդու հայեցողութեան կէտին, որին մեք առաջարկելու էինք այդ խնդիրը:

Եթէ հարցանենք բանաստեղծից, որ յիւրաքանչիւր ոմանի պատասխանել մեզ, որովհետեւ սիրտը նորա բանաստեղծութեանների մէջ ցուցանում առաջին պաշտօններից մինը կամ թէ նոյն իսկ առաջին պաշտօնը, ապա լսելու ենք նորա բերանից, թէ սիրտը է առաջին եւ վերջին բովանդակութիւնը բոլոր գեղեցիկ եւ վսեմ բաների, թէ դա է օթեւանը սիրոյ եւ բոլոր ազնիւ ախտերի, որոց ընդունակ է մարդկային կուրծքը, եւ թէ ոչ միայն հեշտութիւն եւ ուրախութիւն, այլ ամեն տեսակ տրտմութիւն եւ ցաւ ամփոփուած են նորա մէջ: Իւր յաւուրց սրտից, նա, ինչպէս առաւմէ ինքը, դուրս է թափում երբեմն ամենավերին զմայլեցուցչէ խնդութեան, երբեմն ցաւի, մեղմ հաղութմաշութեան, կամ կատաղին փափագի հնչեւնները. նա տալիս է գովաստանած քաջաղաղնների մի «ամուր» կամ «զգացող» սիրտ, իւր խնդքը կանայի կերպարանների մի փափուկ սիրտ. նա թողում սիրողների եւ վշտացածների մեռանել սրտի «հիւանդութեամբ» կամ «բեկմամբ»: Առանց սրտի չկայ նորա կարծիքով ոչ բանաստեղծութիւն եւ ոչ մարդկային արժանաւորութիւն, եւ նա, վերջապէս, տարակոյս չունի հրատարակելու, թէ այդ փոքրիկ բանը իսկապէս է ամենամեծ եւ ամենահշիւ բանը երկրիս վերայ:

Տիեզերքի անչափելի կազմուածում
Ամենագեղ, ազնիւ գոհար բնութեան,
Նորա վայելուն ճառագայթեայ պսակում
Ամենաճոխ մի անգամանդ հիւսական:
Հրաշքների ամենավեր հրաշքը,
Աբարհութեան ճարտարագործ էակը,
Այդ է սիրտը շարժողութեան իւր միջում,
Այդ է սիրտը արձնցութեան իւր միջում:
(Շիլլէր Վիլհելմեան)

Բայց եթէ հարցանենք անդամալնից, բնախօսից (Փիզիօլոգից), արդեօք ի՞նչ էր այդ շատ յիշուած, շատ գովաստանուած

սիրտը, այնուհետև ստանում ենք այս ցանկը պատասխանս. «միջից դատարկ մինակ մի, որ արիւնը դէպ ի վեր ու ցած է խաղացնում»: «Այլևս ի՞նչ», հարցանում ենք: —«Այլևս ոչինչ», լսում ենք դարձեալ նորա բերանից: Ապա, մեր սիրտը տակաւին լցուած բանաստեղծի զմայլեցուցիչ խօսքերից, դարձուցանում ենք մեր դէմքը դէպ ի բժիշկը և հարցանում ենք, միթէ կարելի չէր մեռանել սրտի ցաւից կամ բեկմանից: —«Այո՛», պատասխանում է: «Ապա ուրե՞մն», ձայն ենք տալիս ուրախացած, «բացայայտ է արդէն, թէ սիրտը, որ սիրուց կամ վշտից հիւանդանում է կամ բեկվում է, պիտի մի այլ, և աւելի բան լինի, քան թէ մի դատարկ մինակ»: Այլ բժշկի պատասխանը դարձեալ դուրս է խլում մեզ մեր մոլորութեան միջից: «Դուք սխալանքի մէջ էք», ասում է նա: «Այո՛, կան ցաւագար սիրտեր, բայց՝ ոչ սիրուց, այլ նորա լեզուակների հիւանդոտ այլանդակութենից, և բեկուած կամ թէ ճեղքուած սիրտեր կան նոյնպէս, բայց ոչ վշտից, այլ նորա պատահանների հիւանդոտ փոփոխութենից»: «Այլ», պատասխանում ենք մեք այժմ ևս առաւել՝ նեղի մէջ ընկած, «միթէ կարող էք ուրանալ, որ սիրտը սխալ է կրում կամ թէ շարժվում է, երբ որ մեք ղգում ենք ուրախութիւն կամ ցաւ: Ո՞չ ապաքէն բոլոր արիւնը սեղմվում է դէպ ի սիրտը, երբ մի սաստիկ իմացողութիւն զարթնում է մեր մէջ. ոչ ապաքէն ղգում ենք նորա ուժգին կոծումը, երբ որ մեք ահի կամ ակնկալութեան մէջ ենք. միթէ ղգում չենք նորա դադարառութիւնը, երբ որ մեզ նեղում է մի մեծ գող, կամ երկիւղ. միթէ ղգում չենք ցաւ կամ խայթիւր սրտի մէջ, երբ որ մեզ ցաւեցնում էր մի բան: Ո՞նչպէս կարող էք ուրանալ մի իրողութիւն, որոյ սաստկութեան մասին ամենայն բոլոր հաստատում է մեզ ամենահաւատարի տեղեկութիւն»: Այլ այս սաստիկ բառերի լսողը չկամի մոլորուիլ և ասում է հանդարտօրէն. «Դուք պնդում էք, թէ ղգում էիք ցաւ կամ շարժողութիւն ձեր սրտի մէջ: Այլ եթէ ես փորձ փորձելով խնդրէի ձեզանից ճշդապէս որոշել ինձ այն տեղը, ուր տիրապէս զգած էր ձեր սիրտը, զրե՞թէ տարակոյս չունիմ, որ ձեր որոշողութիւնը լինելու էր սխալ: Շա՜տ անգամ կրկնած են այս փորձը և միշտ գտել են, թէ մոլորիլ, որ ներկայ դտանուած չէին մի դիտակի բացման, կամ թէ որ և իցէ այլ կերպով տեղեկացած չէին, չեն կարողացած ուղղութեամբ որոշել, թէ ի՛նչ տեղում էր զգած նոցա սիրտը: Աւելին նորա կարող ևս

չէին որ և իցէ զգացողութիւնք նորա մէջ նշմարել։ Վէյցուք և, թէ գիտէիք այդ տեղը ամենևին ճշդապէս, այնու ամենայնիւ անկարելի եղած կը լինէր ձեզ, նշմարել ձեր ասած զգացողութիւնքը սրտի մէջ, որովհետև սիրտը, ինչպես յայտնի է, պատկանում անզգայ գործարանների կարգին։ Նա ոչինչ զգում չէ այն բանից, որ նորա ներսումը կամ մակերևութի վերայ պատահում, ոչինչ վիրաւորութիւն կամ այլ ցաւ, և սրտի շատ նշանաւոր տկարութիւնքը կարող են կատարել իւրեանց ընթացքը առանց որևիցէ ցաւ զգալու։ Այլ ինչ որ վերաբերվում դէպ ի Սրտէ դարբնութիւնը, ձեր կարծիքը հիմնած է մի առաստղիքի վերայ. պատճառ, ոչ մի սիրտ կարող չէ դադար առնուլ, եթէ ոչ մի քանի սեկունդ. ապա թէ ոչ, իսկոյն պատրաստուելու էր մահ նորան, որոյ սիրտը դադարել էր. սրտի կոծումը և կուրծքի ճնշումը, շնչառութեան դժուարութիւնը և հարևանցի խայթեր կուրծքի մէջ և սոցա նման բաներ, այո՛, գուցէ թէ այս կամ այն խռովութեամբ սրտի զգումիք կամ թէ զգացել էք, բայց այս յայտնութիւնքը յառաջանում ոչ թէ սրտից, այլ ջղերի համակարգութենից (ներվական սիստեմայից), և թէև սիրտը իւր շուտափոթի կամ թէ դանդաղ, շատ կամ փոքր սաստիկ կոծմամբ մասնակից է այս պատահմունքին, սակայն չէ նա այդ ցաւերի օթևանը և պատճառը, այլ նորա ներվական սիստեմայից կախ շարժողութիւնքը կրումեն միայն շփոթութիւնք, ջղերի մէջ եղած անկանոն պատահմամբ, ուրեմն դարձել են միայն կրաւորականիցք։ Դուք կարող էք նկատել սիրտը, ինչպէս և որ տեղը կամիք, դուք երբէք գտանելու չէիք նորա մէջ այլ բան, քան, թէ մաշկեր և մկնականներ կամ թէ մեքենական անօթ, մի սոլորական գործի, որ իւր անընդհատ պարզ և միատեսակ գործողութեամբ պահումէ արիւնը շարժողութեան մէջ և որոյ միակ, լոկ խորհուրդը ուղղեցուցած է դէպ ի այս շարժողութիւնը։ Եթէ ցաւագարվումէ սիրտը, դորանից կարող էր յառաջանալ ինչ ինչ դիպուածներում մի հոդեղէն անդաշնակութիւն և ծանրաւորութիւն, բայց ոչ իբրև անմիջական հետևանք այս հիւանդութեան, այլ այն բանով, որ մի այդպիսի ցաւակրութիւն շփոթելով արիւնի շրջանառութիւնը շատ անդամ ձգումէ բոլոր մարմինը մի հիւանդոտ և անախորժ որպիսութեան մէջ։ Որպա հակառակ, շատ անդամ տեսանումենք նոյնպէս սրտով ախտացածներ, որ ոչինչ կամ թէ միայն փոքրիկ ծանրութիւն զգումեն

իւրեանց ցաւից, և շատ զուարթ ու կենսասէր են, այո՛, զուցէ չեն զուշակում անգամ իւրեանց ցաւի բնաւորութիւնը և վտանգը: Ուրեմն, պիտի վերահասու լինին, որ այն բանաստեղծական կարծիքը, որ մինչև այժմ ունէին նոքա սրտի մասին, ուղիղ չէր»: «Այո՛», վերջապէս զայրացած ձայն ենք արձակում, «եթէ ուղիղ էր այդ, ինչպէս կարող էր հնարաւոր լինել, որ մարդիկ սկզբից մինչև այժմ մի այլ բան են հասկացել բառովս «սիրտ», քան թէ զուք, նիւթական բժիշկներդ և բնաքննիչդ, կամիք հասկանալ զորանով: Ո՞չ ապաքէն ինքը բնութիւնը դրել է մեր սրտի մէջ այն վկայութիւնը, որ մեք ունինք մի սիրտ, որ մեր ամենագնիւ զգայողութիւնների օթևանն էր: Եթէ զուք խլումէք մարդուց նորա սիրտը, ապա խլումէք նորանից ամենալաւ բանը որ նա ունի, և նուաստացնումէք նորան մինչև դէպ ի մի մեքենայ, որ ուտում է, վաստակում է և մեռանում է»: — «Ընդունելին ոչ», դարձեալ խօսքը վեր է կալնում բժիշկը. «եթէ կամէինք խլել մարդուց նորա սիրտը, ապա կ'արտաքսէինք նորա օրգանական (կենդանական) կազմուածքի գլխաւոր շարժառիթը և շուտով կը վերջացնէինք այս մեքենայի բոլոր գործունէութիւնը: Ո՛չ մի գործողութիւնը այս կազմուածքի չէ կատարվում աւելի մեքենական կերպով, քան թէ սրտի գործողութիւնը, և եթէ լեզուի գործածութիւնը ժամանակների ընթացքում ընծայել է սրտին ամենայն տեսակ հոգեղէն և ախտային գործողութիւն և ամփոփել է նորա անուանակոչութեան մէջ բոլոր ուրախ կամ տրտում զգայողութիւնքը, — այդ լեզուախօսութիւնը պարզապէս սխալ է և յառաջացել է պակասաւոր ստոյգ գիտութեան և ֆիզիօլօգիական տեղեկութիւնից կամ թէ մոլար բնահայեցութիւններից, երբ տակաւին շատ թիւր կարծիքներ ունէին մարդկային մարմնի պաշտօնների մասին: Զուցէ թէ այժմ, երբ արդէն աւելի լաւ վերահասու ենք եղած այս իրողութիւններին, բուն ժամանակն էր, փոխանակ այդ սխալ լեզուախօսութեանը հաստատել մի նոր և աւելի ուղիղը»:

«Այդ ո՛չ», դորա ընդդէմ աղաղակումեն սրտի բարեկամքը և ջատագովները, «դա չափից դուրս բան է, թո՛ղ բոլոր ասածները ճշմարիտ լինին, բայց մեր լեզուախօսութեան մէջ գոնէ, չկամինք թոյլ տալ, որ ձեռնամերձ լինին սրտի հին և բարեստաց իրաւունքին, և չկամինք մի այլ խօսք փոխանակ սուրա, որոյ հետ վաղուց արդէն սովորած ենք լծորդել այնքան դիւրեղիկ և անհրաժարելի ըմբռնողութիւն»:

Եւ յիրաւի, նոյն ինքն հեղինակը այս յօդուածի համառօտին չէ բժշկի հետ, որ իւր հարցանողների տհաճութիւնը յարուցել է նորանով, որ կամէր կրճատանել այս հին և սրբացուցած ոճը լեզուի։ Պատճառ, այս ոճը, ինչպէս կը ցուցանուի այս ճառի ընթացքում, ունի իւր շատ բնական և ֆիզիօլօգիական հիմն. նա միշտ հաստատ կը մնայ, և բոլոր անատօմիների և ֆիզիօլօգների դէմ յանդիման բանաստեղծը կը պահպանէ իւր իրաւունքը, որով ընծայում նա սրտին այդքան բազմապատիկ գեղեցիկ յատկութիւնք։ Այլ արդարև, այդ ոճը լեզուի է և կը մնայ միշտ մի լոկ պատկերական և կարող չէ արդիւք լինել մեզ հատուցանելու ճշմարտութեանը և ստուգութեանը իւր արժանը, և հարցանելու, արդիօք, բայ ի այս պատկերական, առասպելական և բանաստեղծական սրտից, անատօմիական սիրտն ինչ է։ Այնուհետև, այո՛, չկայ մեզ մի այլ պատասխան, քան թէ արդէն տուած էր։ Այնու ամենայնիւ սիրտը, բժշկի ու բնագէտի անօթի աչքով և նկատելով, է մի շատ մեծ ուշադրութեան արժանի, հարցասիրելի և մեծահիշու բան, որոյ ճիշդ որպիսութեանը պէտք էր, որ տգէտ մնայ մի կրթեալ մարդ, և եթէ մեք մեր ճառի մէջ չունինք ոչինչ բան պատմելու սրտի յատկերի կամ վշակ, նորա ուռող մաշող որդների, մի տրտում կամ սիրող, քաջ կամ վախկոտ սրտի մասին, այնու ամենայնիւ, նկատելով նորան թէ առողջ և թէ հիւանդ որպիսութեան մէջ, կը գտանենք բաւական շատ, ուշադրութեան արժանի բան. եթէ նա ստուգապէս ոչ այլ ինչ էր, բայց մի անգիտակից դէպ ի վեր ցնծող անօթի, և այդպէս պակաս չէ նորան մի բանաստեղծական գեղեցկութիւն, որ նշանաւոր է իւր շինուածքի և իւր պարզ բայց արուեստալից կազմուածի պատճառով, որ և մի աւելի ընտիր բան է, քան թէ բանաստեղծական խարէութեամբ նորա վերայ հագցրած սուտ զարդը։ Դա է կենդանական անատոմիայի ամենակարևոր գործարաններից մինը, միջնակէտը արիւնի բովանդակ շրջանառութեան և գրեթէ մի հատ շարժողը բոլոր մարմնի և նորա վերջին ծայրերի մէջ գտանուած արիւնի բազմութեան — մի շատ պարզ, և շատ յարմարապէս կարգաւորած մեքենայ, որ միշտ գտանվում մի անընդհատ շարժողութեան մէջ և գտալուում միայն մահով. մի մեքենայ, առանց որոյ անհնարին է մի կենդանական, կամ մարդկային կեանք։

Արտաք, անատոմիապէս քննելով, է մի բոլորակ, կամ աւելի

ուղեղ խօսելով, ձուաձեւ մեղրէն պարկ, մի մանչիկայ քսակի, որուն տակ ատաճ պատենի մէջ վակած, որ իւր տոլրին ծայրով վերջանում բթածայր, իսկ իւր վերին և յետնակողմեան մասնումը կապակից է մեծ մանչկղէն խողովակների և արիւնային անօթների հետ: Խազաթղթի վերայ նկարած սրտաձեւի հետ շատ հեռի նմանութիւն ունի այս պարկը և թէ ինչ պատճառով ժողովրդական տեսութիւնը սկզբից սիրտը այսպիսի առանձին, վերևից ներս կըտրած ձևով, այո՛, և նորա միջից դուրս եկած բոցով նկարագրում մտքով, կամ թէ կերպաւորում, յայտնի չէ: Այս մեղրէն պարկի մեծութիւնը մօտաւորում մի կծկած ձեռի, մինչ ցաւագարութեան մէջ կարող է հասանել գրեթէ հնգապատիկ, այո՛, վեցապատիկ մեծութեան և լցուցանել գրեթէ բոլոր ձախակողմեան մասը կուրծքի: Նորա դիրքը է փոքր ինչ դէպ ի շեղ, ծայրը դէպ ի ցած թեքած, կէս մի կուրծքի մէջ տեղում կրծոսկրի քամակում, և կէս մի ձախակողմեան կրծակէսի, այլև, անմիջապես յետնակողմում այն տեղ գրած կողերի, և մի մասով կից նոցա: Նորա հզերքը միայն չորս կողմից ծածկվում նոցա վերայ տարածուած թոքերի մի մասով: Եթէ մի կենդանի անասունի կրծոսկրը և կողերի մի մասը վերացնում նրանք և սրտի քսակը բացում նրանք, կարելի էր տեսանել ոչ թէ միայն սրտի կանոնաւոր դիրքը, այլև շարժումը: Նոյնպէս, եթէ շուտով մորթում նրանք անասուններ և խլում բացում նրանք նոցա կուրծքի փոսը, տեսանում նրանք սրտի մի քանի րոպէ գարկողութիւնը, որ և, օդ ներս փչելով թոքերի մէջ, հնչած կարելի էր ասել երկար միջոց պահպանել: Բայց ոչ թէ միայն անասուննեների, այլև մարդուս մէջ կատարած են անմիջական տեսութեամբ քննասիրել սրտի դիրքը և շարժողութիւնքը կենդանութեան միջոցին, կէս մի կուրծքի մեծ մեծ վիրաւորութիւններով և կէս մի այնպիսի մարդերի վերայ, որոց մէջ մի ծննդական պակասաւոր կազմուածքով կուրծքը մի մասով բաց էր և սիրտը տեսանելի*): Եթէ փակ է կուրծքը, անմիջապես տեսութեան պա-

*) Մի այդպիսի մարդ, Եւգենիոս Գրուբս անուն, Համլուրգեցի, Ճանապարհորդութեամբ այժմ ևս, որ ցոյց տայ իւր կուրծքը ակադեմականներին և ուսումնականներին. դա, ինչպէս պատմուած մի յօդուած «Իրլանդեան Առլանտիսի» մէջ, որոյ հեղինակը է Դօքտոր Լիմոս, կրում մի լայնարերան, խոր վերք կուրծքի մէջ. բայց դա չէ սոսկ վերք, այլ մի ծննդական անվնաս արատաւորութիւն, որ իւր ունեցողին արդելք չէ խնդալի կերպով վայելելու կեանքը: Այս արատաւոր կերպարանագործութիւնը Գրուբս պարոնի մէջ այնպիսի է, որ կուրծքի ոսկրը չէ ստացել իւր կատարեալ ձևակերպութիւնը, այլ դարա

կատարելիւնը լցուցանումէ վերայից դրած ձեռի զգայուելիւնը, որ շարժուն սրտի բաղխումը դէպ ի կուրծքի պատը յայտնապէս իմանումէ առաւել յայտնապէս սրտածայրի կողմում, մօտ երկու մատնաչափ լայնութեամբ դէպ ի ցած ձախակողմեան կուրծքի պըտուկից, կամ թէ հինգերորդ և վեցերորդ կողի մէջ ձախակողմում: Ոչպէտ խօսքս «բաղխումը» չէ բոլորովին ուղիղ, ըստ ուրում շարժողութիւնը է աւելի մի դէպ ի յառաջ կամարակապութիւն սրտի մկնականին նիւթի և մի և նոյն միջոցին մի ճնշողութիւն դէպ ի կուրծքի պատը, որով մի փոքր բարձրանումէ տեղատու միջնակողմեան տարածութիւնը: Ա յս փոխ առ փոխ, սրտի ամեն մի կծկողութեան հետ կրկնումը ճնշողութեան, մինչ սրտի ծայրը փոքր ինչ դէպ ի վեր է բարձրանում, յառաջացնումէ այնու հետև այն բանը, ինչ որ մեք սովորաբար ասումենք «սրտի զարկողութիւնը» կամ «բաբախումն սրտի»: Սրտի զարկողութիւնը մեզ տալիս մեղ, թէ մեր կենսական գործողութիւնը արթուն էր, մեր արիւնը շարժողութեան մէջ էր, թէպէտ դա սովորական ոյժերի մէջ իմանալի չէ անձնաւորական զգայողութեանը, որովհետև

րել է մի նախընթաց աստիճանի վերայ, և այդպէս երկու մատն բաժանուած, ձեռնունկ մի երկար, անկանոն եռանկիւնի ձեղքուած, որ Գրուբսը կամայապէս կարող է լցնացնել կուրծքի միևնոյնների ձեռնաուութեամբ, այնպէս որ այս ձեղքուածի մէջ թոքերը, սիրտը և մի քանի մեծագոյն անօթներ տեսանելի, զգալի և իւրեանց գործողութեան մէջ լսելի են նոյնպէս: Այդ տեղ շատ յայտնապէս կարելի է տեսանել սրտի շարժողութիւնը, ինչպէս նորա ծայրը փոխ առ փոխ բարձրանումէր դէպ ի կուրծքի ներքին պատեանը և դարձեալ ցածանումէր դէպ ի ներս: Նոյնպէս ըշտփող ձեռքը զգումէ թոքերի դէպ ի վեր ու ցած խաղալը և այլն:

Հարկէ, ականատես բնաքննիչի ժամանակում — պատմում Դօքտօր Լիօնսը — սովորութիւր մի պատանի փոխակոմս Մօնդօմիների անուն, որոյ մէջ ձախոյ կողերի բեկմանից և երկարաժամանակեայ ժահրակալութենից յառաջացել էր մի մեծ դժուարութիւն նորա կուրծքի տախտակի մէջ, որոյ միջով կարելի էր երեք մատն բթամատով հանդերձ ներս տանել. Հարվէյը, իբրև պալատական բժիշկ, տարաւ փոխակոմին Գիուելթեան ծառաղ Ա. Կարոլոսի առաջև և նորա ներկայութեամբ կատարեց իր քննողութիւնը: Նա վերահասու եղաւ այս տեղ, որ այն մեզելէն դուրս ցցուած բանը, որ միտերը հանապատել էին թոքեր, էր արդարև սրտի ծայրը — նորա բաղխողական զարկելը դէպ ի կուրծքի տախտակը, որպէս և փոխ առ փոխը երակազարկութիւնը ձեռի յօդուածի մէջ աներկիւղ կացուցին Հարվէյն իր կարծիքի մասին: Բայց երիտասարդ Մնդօմիներին, երբ որ յիշեալ արտաւորութիւնը կորուսել էր իր վտանգը և ահաւորութիւնը, վայելուչագոյն մի քաղաքացի կեանք: Նորա տպատաւորը ունէր ամենայն օր մաքրելու նորա կուրծքի փոսը և ապա ծածկելու նորան մի տափակ լերինով, իբրև պաշտպանութիւն դուրսից:

կամ դորանով յառաջացած զրգռումը չկղելի չէ հասանում գիտակցութեան և իմացողութեան գործարաններին, կամ թէ երկար սովորութեամբ մեր զգայութիւնը բթացել էր դորա համար: Բայց եթէ դիտաւորութեամբ ուղղենք մեր առանձին ուշադրութիւնը մեր սրտի շարժողութեան վերայ, ապա փոքր ի շատէ զգումենք դորան: Այս աւելի զգալի է դա, երբ սիրտը զրգռմամբ կամ հիւանդութեամբ ընդունում է մի կրկնապատիկ և կանոնից դուրս շարժողութիւն, այնուհետև ծնանում է մի աւելի սաստիկ նեղիչ զգացողութիւն յառաջացնող կծու-ը սրտէ: Այս պատահում յատկապէս, երբ սիրտը հիւանդանալով թանձրանում է մեծանում, և այդպիսի դիպուածում սրտի կոծումը լինում է տևողական, մինչ լոկ ջղախտական (ներվոզական) զրգռմամբ, անցաւոր է: Այլև, սրտի բաղխումը, երբ որ նա աւելի մեծացել էր այդպէս, լինում է ոչ թէ միայն աւելի սաստիկ և զգալի, այլև փոխում է իւր տեղը, ուր կարող էր նա առաւել յայտնապէս զգալի լինել:

Այսինքն, երբ որ սիրտը աւելի մեծանում է, ի հարկէ, պիտոյ էր նորան և աւելի մեծ տեղ բռնել, քան թէ յառաջ և սորա նով իւր ծայրը աւելի ցած թողուլ և իւր փոքր ինչ շեղ կայքի պատճառով, աւելի դէպ ի կողմնակի ցած: Այս պատճառով, մի այդպիսի դիպուածում, սրտի բաղխումը զգալի չէ իւր կանոնաւոր տեղում, այլ շատ անգամ մի քանի մատնաչափ քայլութեամբ աւելի խոր և աւելի կողմնակի: Երբ որ բժիշկը քննելով մի մարդու կուրծք, գտանում է այդպիսի որպիսութիւն և սրտի զարկողութիւնը աւելի ուժգին, խոր և կողմնակի, քան թէ սովորական կացութեան մէջ, այս միակ, ըստ երևութին աննշան հանգամանքից արդէն կարող է նա եղրակացնել մի սաստիկ հիւանդութիւն և առաւելագործութիւն սրտի: Բայց մի ևս աւելի դէպ ուղիղ հնար սահմանելու սրտի պարունակութիւնը և մեծութիւնը իւրաքանչիւր մարդու մէջ, տալիս է բժշկին ստացեալ բազխելը սրտի: Մինչ քան որ սիրտը կից էր կուրծքին, զարկող մասը յառաջացնում է մի թոյլ և դատարկ շառաչիւն, մինչ այլ միւս տեղերում, ուր դառնվում էր օդաւոր թոքային նիւթ, յառաջանում է մի լիք, թնդացող ձայն: Սորանից հեշտ իմաստասիրելի է, որ այս կերպով պիտի կարելի լինի որոշել սահմանքը սրտի և թոքերի մէջ, և արդարև բժիշկը գործ դնելով այս հնարը, այլև ուշադիր լինելով սրտի բաղխման տեղին և սաստկութեանը, կա-

լող է շատ ու շատ անգամ տալ մի ճիշդ և որոշ դատողութիւն մի առողջ կամ թէ հիւանդ սրտի մեծութեան մասին:

Այդ անընդհատ շարժողութեան պատճառը, ասես թէ, դրած է նոյն իսկ սրտի, կամ մանաւանդ սորանում պարունակուած ջիղերի և ջլական հիւսածների մէջ, ուստի գուցէ յառաջանում է, որ այս շարժողութիւնը ցուցանում այնքան մեծ և ուշագրութեան արժանի ինքնիշխանութիւն, մինչև այն սիրտերն անգամ, որ դուրս էին հանած մարմնից և ամենևին բաժանած էին նորա նից, շարունակում իւրեանց զարկողութիւնը: Մարմնից դուրս կտրած սիրտը դորաների կարելի է տեսանել ամբողջ ժամեր թռչտելով սեղանի վերայ կամ թէ զարկելով, սկզբում արագ ու սաստիկ, յետոյ աւելի ծանր և թոյլ, մինչև նոցա կենսական շարժողութիւնը կամաց կամաց չնջանում: Եւ՛, այս շարժողութիւնը կարելի է պահպանել ամբողջ օրեր, եթէ չթողունք նոցա չորանալ, այլև պահեինք չափաւոր ջերմութեան մէջ, կամ կախ տայինք, որ ազատ մնային օդի մէջ: Ի՛նչ ասեմ, մինչև բաց կտրած մասնիկը շարունակումն իւրեանց շարժողութիւնը, որ պատրաստուէմէր նայեցողին մի առանձին և խորհրդ տեսարան: «Այո՛»—ասումէ Հուխսը—«մինչ այն տեսարաններից, որ լցուցանումն անպատմելիի հոգին մի տեսակ ահ ու դողով: Նմանապէս մանկութենից, ուսած էր նա սրտի զարկողութիւնը որ և իցէ ծածկախորհուրդ կերպով հաղորդակցել կեանքի և շարժողութեան հետ, բայց այս տեղ տեսանում դորա յայտնութիւնը այնպիսի պայմանների մէջ, ուր կարելի չէ ենթադրել ոչինչ կեանք և շարժողութիւն. ի՛նչ խորհուրդ ունին այդ շարժողութիւնքը. դորա չեն այն կանոնաւոր շարժողութիւնքը կեանքի, դորա չեն խառնութիւնքը ահի, և ոչ իսկ ներդործութիւնը մի բնական ապրելոյութեան: Մեռած ու կործանուած է զարմանալի մեքենայական շինուածը, որոյ միջնակէտը մի փոքր յառաջ եղած էր սիրտը. բայց այժմ մեռած մարմնի մէտ դրած է այս գործարանը յառաջ տանելով իւր զարկողութիւնը, որպէս թէ միայնակ կամէր շարունակել իւր պատերազմը մահու հետ»: Ի հարկէ յանկարծակի, բանութեամբ յառաջացած մահու տեսակների մէջ, ուր սրտի գլխաւորութիւնը շնջած չէր նախընթաց հիւանդութեամբ, կարող է նոյն բանը պատահիլ մարմնի մէջ: Պատճառ գնողը մի ապիտակ նապաստակի մէջ, որ 10 օր մահուց յետոյ, բայց արած կուրծքի արկղով դրած էր այն

տեղ, նկատեց սրտի աջոյ նախասենեակը դեռ ևս սաստիկ զարկելով. այս տևեց 15 ժամ մահուց յետոյ, բոլոր առ բոլոր տևելի թուլանալով: Ա. ուլպիանը նկատեց, այո՛, մի շան մէջ տատանողական շարժողութիւնք սրտի սենեակներուն մինչև 24 ժամ, իսկ աջոյ նախասենեկի մէջ մինչև 93 ժամ մահուց յետոյ: Ամենևին նմանապիսի նկատողութիւնք արել են մահով պատուհասածներուն և կախ տուածներուն վերայ, որոց մէջ շատ ժամեր պատժակրութենէց յետոյ տեսել են այդպիսի շարժողութիւնք սրտի: Ըլլև մի սիրտ կարող է դադարած լինել շարժուելուց կամ 4 մինչև 5 ժամ ամենևին հանդարտած ու անգործ լինել, այնու ամենայնիւ կարող էր տակաւին մեքենական, քիմիական և ֆիզիքալեան դրդռութեան ազդեցութեամբ նոր ի նորոյ կծկուիլ: Օրը օրինակ, մահով պատուհասած մարդկերի սիրտը բաւական երկար ժամանակ մահուց յետոյ կարողացած են էլեքտրականութեամբ ձգիլ կրծկողութիւններուն մէջ, և գորտի դուրս կտրած, արդէն հանգստացած սիրտը նոր ի նորոյ սկսանուամէ զարկել, եթէ մանաւորութիւն նորան մի ազդողութիւն:

«Սակայն ոչ միշտ պատահումէ», ինչպէս լսումենք Ա. ուլիս բնաբնի բերանից, որ երակների զարկողութիւնքը շուտով վերջանային, երբ որ մահը հասել էր կամաց կամաց: Ա. իլալիոսը ասել է այս մասին ահաւոր փորձ: Այս մեծ անդամանդնիը, որ ներքին աշխուութեամբ ազատ էր կացուցել իւր անձը իւր ժամանակի կանխամուտ մոլար կարծիքներից և բաւական չէր, ինչպէս նորա նախորդքը, անդամմտելով անատուններ միայն, թոյլ տուեց իւր կարողական դանակին խորտակուիլ և մարդու կազմուածքի խորքի մէջ և մի օր բացեց դիակը մի երիտասարդ ազնուականի, որոյ հոգաբարձու բժիշկն էր եղած, ոլորտէս զի, եթէ կարելի էր, վերահասու լինելը նորա մահու պատճառին: Բայց ով կարող է նկարագրել բոլոր նկիկայ դատնուած մարդկերի զարհուրանքը, երբ

*) Ա. ուլպիանոսին (Gaz. de Paris 51, 53, 1858) մանաւորուեցաւ Եմ. Բուլոյի կողմից այս նկատողութիւնս անատոմիայի մէջ Բուէն քաղաքում 1808 թուակ: Մարտ կամ ապրիլ ամիսներում մահով պատուհասած մի կնոջ մէջ երևեցան տակաւին սրտի աջոյ նախասենեկի կծկողութիւնք, երբ որ կուրծքի արկղը 24 ժամ մահուց յետոյ բաց արեցին. և այս շարժողութիւնքը դեռ ևս տեսանելի էին, երբ սիրտը արդէն հինգ ժամ բացուած էր: Դիակը մնացել էր դրած սեղանի վերայ մի ջերմացուցած լաբորատորիումի մէջ: Երկու կլոկեաքը, Լոմնիէն և Գլօլեբտը, ատադը, նկատեցին այս շարժողութիւնքը:

որ նոքա տեսան սիրտը դիակի մէջ տակաւին զարկելով կանոնա-
պատշաճ : Ո՛չ իղձքնոսը պատահարուեցաւ իրրև մի յանդգնաւոր,
ըստ որում անդամահատել էր մի մարդ կենդանի տակաւին. և այն
ժամանակի համար այդ պատահարութիւնը չէր բոլորովին անհե-
լացի: Նորան հարկ եղաւ երևիլ հոգևոր քննութեան դատաս-
տանի առաջև և հազիւ հազ ազատուեցաւ մահու պատուհասից:
Ուխտադնացութեամբ դէպ ի Երուսաղէմ պիտի նա քաւէր իւր
մեղքը, բայց նա երբէք չկարողացաւ յաղթել այդ անբաղդ պա-
տահմանից յառաջացած դայթակղութեանը:

Մի քանի օր թուխս նստած հաւի ձուերի մէջ տեսանումն
սիրտը իրրև մի փոքրիկ, կարմիր, ոստոստուն կէտ, և երբ որ մը-
տածումնք, թէ այս լինումէ այնպիսի միջոցում, ուր դեռ ևս
գոյացած չէր արիւն սրտի մէջ, և ոչինչ հետք ջղական նիւթերի
կարելի չէ ապացուցանել այդ տեղ, ուրեմն սիրտը ստուգութեամբ
ոչ այլ ինչ էր, քան թէ խորշիկների կուտակութիւն. երբ որ այս
բանս համեմատումնք մի քանի փորձերի հետ ստորակարդ շնչա-
ւորների վերայ, ապա պէտք էր յօժարամիտ լինել դէպ ի այն կար-
ծիքը, թէ և ոչ իսկ սրտի ջիղերն են նորա գործունէութեան շար-
ժիչքը, այլ այս գործունէութիւնը պիտի ունենայ մի ինքնիշխան
աղբիւր նոյն իսկ սրտի մէջ և նորա մկնակային մասների մէջ:
Եւլև, թէ սրտի միջով հոսող արիւնը անդամ կարող չէ լինել
նորա շարժողութեան պատճառը, ինչպէս մի օր կարծումէր Հալ-
լերը, ապացուցանվումէ նորանով, որ դուրս կտրած և դատարկ-
ուած սիրտը զարկումէ տակաւին: Սակայն այս բոլորս արդիւք չէ,
որ նորա շարժողութեան կերպը, այլև արագութիւնը մեծապէս
փոխոխուէր և այսպէս կամ այնպէս որոշուէր ջիղերի ազդեցու-
թեամբ: Յատկապէս, երկու հատ ուղեղից դէպ ի սիրտը ցած իջա-
նող ջիղեր են, որ յատկանումն մի այդպիսի ազդեցութիւն
շատ արժանի ուշադրութեան կերպով: Եթէ զրգռումնք այդ
ջիղերը, սիրտը զարկումէ աւելի ծանր, իսկ եթէ սաստկացնումնք
զրգռումը, մի քանի րոպէ դադարումէ նա, որպէս զի յետոյ, երբ
արդէն վերացել էր զրգռումը, առաւել սաստիկ զարկերով, կա-
մնոյ կամոյ դարձեալ նորոգէ իւր գործունէութիւնը: Ուրեմն,
երբ որ մեք մի սատակ սրտաշարժութեան մէջ զրգռումնք, որպէս
թէ սիրտը յանկարծ դադարումէր, որ մի քանի րոպէ սաստիկ և
բաղխող զարկերով լցուցանէ ինչ որ զանց էր արել, այդ պիտի

ընծայենք այն թափառական ջղի ազդեցութեանը, որ ուղեղի մէջ յառաջացած գրգռումը տարածել է մինչև սիրտը: Սորա հակառակ, կոչը սովորական պայմաններուի մէջ ամենևին անկարող է որ և իցէ ազդեցութիւն գործել ոչ-ոէ, որպէս և բոլոր սիմպատիկական ասած ջղակարգին ստորադրած մասնեցի և նորա շարժողութեան վերայ: Ընդհակառակն ամենայնիւ պատճառաւն ունանց մարդերի մասին, թէ կարողացած են կամայապէս փոփոխել իւրեանց սրտի շարժողութիւնը, այո՛, դիտաւորութեամբ ձնշելով շնչառութիւնը և սրտի շարժողութիւնը, յառաջացրել են իւրեանց մահը:

Ս. Նազարեանց.

(Շարունակութիւնը յետոյ.)

ԱԶԳԱՑԻՆ ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆ.

Ի սուտ հին ժամանակներից սկսած, Հայոց ազգային և ներքին գործերի կառավարութիւնը, Տաճկաստանի մէջ, միշտ Հայոց ձեռքում էր թէև, բայց այդ կառավարութեան ղեկավարքը լոկ մի քանի հոգի բռնակալ մարդիկ լինելով, բնականաբար, կառավարութիւնը հանդիսացնում էր մի այնպիսի անկարգութիւն, և խառնափնդորութիւն, որ հազիւ կարելի է երազում երևակայել: Ինչպէս ասացինք, մի քանի այդ կարգի և տեսակի վատթար մարդիկ, կղերի հետ միացած, իւրեանց ձեռքը ձգելով ազգային ջարդ ու փշուր լաստի ղեկը, առանց օրինաւոր հոգաբարձութեան, առանց մաքուր խղճմտանքի և միմիայն իւրեանց անձնական շահին, ախտերին և կրքերին ծառայելով, ոչ միայն յառաջ չէին մղում այդ կիսակործան և ալեխառնջ լաստը, ոչ միայն փոյթ չունէին, գոնէ, մի խաղաղ ծովածոցի կամ նաւահանգստի մէջ նորան ապահովելու, այլև քակում էին և խլում էին այդ լաստից այսօր այս փայտը, վաղը այն երկաթը, երրորդ օր միւս չուանը և իւրեանց չար օրինակներով և գործերով ուրիշներին էս տեղիք տալիս և հրահրում նոյնը գործելու ազգի ի սպառ կործանութեան համար:

Արծնական ճեղքուածքը, որ կան այսօր՝ մեր ազգի մէջ, երբէք յառաջացած չեն բուն դաւանութեան բանական խնդիրներից, այլ պատրաստուած և արդիւնացած ազգային ներքին և կրօնական գործերի չարաչար կառավարութենից: Այս բանը նոր ապացուցութեան կարօտ չէ. ամենին յայտնի է, ապացոյց խնդրողն

Եւ այսօր կարող է մեր ասածի վկայութիւնքը տեսանել այն կէնդանի եւ տակաւին թարմ իրողութեանց մէջ, որ ամեն օր դործ-ւում են մեր աչքի առաջեւ:

Մենք սարսափում ենք, երբ աչք ենք ձգում այն անշքացած, անուսուցացած աշխարհի վերայ, ուր երբեմն փողոսողութիւն Ըշակունեաց յաղթական դրօշակը, ուր այժմ մեր խեղճ, անտէր եւ անօգնական ժողովուրդը մխիթարուղ բազմութեամբ թշուառութեան, հարստահարութեան եւ յուսահատութեան մինչեւ հնաբուղ ծայրը հասած, փոխանակ արտասուքի, արիւն է քամում աչքերից, երբ լայ է լինում, եւ ուր, դարձեալ, հայակերպ եւ գիշերադէմ վամպիրները տակաւին չեն կշտանում անմեղ զոհի խեղճ ժողովրդի — արիւնը ծծելուց:

Ծանր եւ յամրաշարժ էր ազգային լուսաւորութեան ընթացքը Տաճկաստանի մէջ եւ այդ ընթացքն էս անհիմն եւ սայթաքելի. յայտնի է թէ այն թշուառ հանգամանաց մէջ ուրիշ կերպ չէր էս կարող լինել: Դարեր անցան, շատ ու շատ սերունդներ ահ ոհ քաշելով եկան գնացին, շատ իրաւունք ոտնակոխ եղան, շատ գանձեր յափշտակուեցան, շատ տուներ քարուքանդ եղան, մինչեւ որ սորանից մի քանի տարի յառաջ «Սահմանադրութիւն» բառը մեր ազգայինք արտասանեցին:

Սահմանադրութիւն, կրկնեց հարստահարուած եւ կիսաշունչ ժողովուրդը. Սահմանադրութիւն, լսուեցաւ եգիպտական բուրգերից մինչեւ Ալպատայ սարը. Սահմանադրութիւն, ազազակեցին եւ հրճուեցան կենդանի երիտասարդները:

Ընդ միջոցին մինչեւ այն տեղ էր հասած ազգային կառավարութեան գերաճայրեաց անպիտանութիւնը, որ Նոյ իսկ, որ միակ պատճառ էին այն չարաչար եւ դատապարտելի կառավարութեան, չհամարձակուեցան բերան բանալ ընդդէմ խօսելու. պատճառ, ոտքից մինչեւ գլուխ ապականուած էին աղտեղի գործերով, եւ հասարակաց ազգի բողոքը նոցա եւ նոցանմանների ընդդէմ, վաղուց եւ վաղուց ծանուցած, մինչեւ երկինք էր հասանում:

Սահմանը գլուեցաւ:

«Կեցցէ Սահմանադրութիւն».

Տակաւին լսվում էր այս խօսքը հաղարաւոր բազմութեան բերանից. տակաւին Հինքեար-սկելեսիի դաշտավայրը իւր մէջ ունէր այն օրհնելոյս բազմութիւնը, միւս կողմում Նոյ, որ կորուս-

սել էին իւրեանց ժառանգական կողոպուտը, իւրեանց մշտնջենական ոյսը, իւրեանց լուռ և անխօս զոհը, որոյ սրինդով ներկել էին իւրեանց քիթ ու պռունչը, սեմաիեցան առաջին հարուածի պատճառած ապշութենից, զարթեցան և սկան այնուհետև դուրս սողալ իւրեանց խաւարային որջերից և վազել Պեշիկ-թաշ։

«Սահմանադրութիւն. ի՞նչ ասել է Սահմանադրութիւն. տէրութեան մէջ տէրութիւն կանգնեցնել. տէրութիւնը վաւերացուցած չէ (թէև ինքեանք ստորագրած էին), մեք չենք ընդունում Սահմանադրութիւն, մեք չենք ճանաչում Սահմանադրութիւն, որ լոկ երկու նպատակով է յառաջացած; նախ, ապրը աւրի անհաւասար ընելը, երկրորդ, տէրութեան պէտ ապստամբեցնելը»։

Այս մի վաստակեան մտանութիւն էր, մի մեհրուժանեան սուր, որ շատ անգամ մերկացած լինելով, նաև տասն և վեց դար անցանելուց յետոյ վերսին քարշեցին ազգի ընդդէմ։ Յայտնի է, թէ տէրութիւնը առիթ ստացաւ ներս մտանելու մեր ազգային ներքին գործերի մէջ. նորա ցանկութիւնն էս այդ էր, իսկ խռովարարները և ազգի դաւաճանների համար ամեն հնար սուրը էր և շուն կապելի էր մատաղ առնել, միայն թէ Սահմանադրութիւնը կոծանուէր։ Այնուհետև երևեցաւ մի սոսկալի ճեղք, մի սարսափելի խռովութիւն, որ միմիայն Տաճկաստանի առհասարակ խառնաւնդոր կառավարութեան մէջ կարող էր անհնշմարելի կամ ոչ այնքան զգալի լինել, թէև այն տեղ էս չմարսուեցաւ, և եւրոպացան օրագիրքը շատ անգամ էջեր լցուցին այդ մասին։ Երևեցան կուսակցութիւնք, Սահմանադրութեան պաշտպանք և թշնամիք, յառաջդիմացք և յետընթացք, ը-սա-ը-բե-ա և խա-ա-բե-ա։

Ես որովհետև բնականաբար «Ուր դէշն իյէ, անդր ժողովեսցին արծուիք», ուստի միացան այդ բոլոր դիշակերքը և իւրեանց կեռ կտուցները և սուր մագիլները առաւել էս սրեցին անպատասպար և ազատներամ ժողովուրդի ընդդէմ, որ ոչ պէյ էր, ոչ էֆֆնտի և ոչ փաշաների առաջև ծունկ չոքելով մէջքի օձը կոտրած, հեռաւաբար և առաւել ակար, ակար ասումենք, բռնութիւնը հասկանալով մի կոպիտ ոյժ։

Սահմանադրութեան բարեկամների միակ ղէնքն էր ճշմարտութիւնը, որ լուսաւայլ էին կացուցանում հայկական խօսքի միջնորդութեամբ, ղրիչը ձեռքին անձանձիր ճգնելով. և որովհետև ճշմարտութիւնը չունի մատն, չունի վարձ, ուստի և օտարոտի էր,

երբ ոմանք ճանապարհի կիսից յետ դարձան, երբ միւսերը լաւագիկեցի գարձան, երբ մի քանի ուրիշներ անպիտան արիմներուԹեան օրինակը ցոյց տուեցին։

Աղազակից հասարակ ժողովուրդը, հեղեղի պէս վազեց նորա հոսանքը դէպ ի պատրիարքարան, ուր հակառակ ազգի կամքին և ընդդէմ Սահմանադրութեան, ազգի թշուառութեան պարսաւոլքը վերստին հաւաքուել էին իւրեանց սովորական խաղը խաղալու և ազգն ևս խաղալիք շինելու, ազգը ցրուեց այդ աւազակաց ժողովը և «պարտաս աղաւնեվաճառաց և զսեղանս հատավաճառացն կործանեաց»։ Այդ միջոցին արիւն քրտնեցան արի երիտասարդները, այդ խորհրդաւոր միջոցին վերջին ճիգը Թափեց հայկական խօսքը և Երիսատեղի գիտութիւնը։

Տերութիւնը մի քննիչ ժողով կազմեց, երկու կողմի մարդկից, որ պիտի քննէին Սահմանադրութիւնը, պիտի սրբագրէին նորան և ներկայացնէին տէրութեան։

Հիսիսափայլը քաջ գիտէ «տալ որում պիարկ, պիարկ, որում զպատիւ, զպատիւ»։ ուստի և ամենևին միտք չունի դատապարտել այն պարոնայքը, որ նստած էին այն տեղ որպէս սահմանադրասէր։ Հիսիսափայլը անարդարութիւն է համարում ուրանալ Պ. Սկը Վ. իշխանի աշխատութիւնը։ Հիսիսափայլը մինչև անգամ հակամիտ է կարծել, որ, առանց այդ արդոյ պարոնին, Սահմանադրութեան վտանգը կարող էր գուցէ աւելի ծանրանալ։ բայց Հիսիսափայլը չէ կարող գովել այն թոյլտուութիւնը և պնջողութիւնը, որ արդոյ պարոնը շնորհում խաւարեալների կողմին։ Հիսիսափայլը չէ կարող ուրախութեամբ յիշել, երբ Պ. Սկը Վ. իշխանը, որպէս միակ ցոյս սահմանադրասիրաց, չկամէր գործ դնել իւր բոլոր ազդեցութիւնը լնամանն կերպով։

Արդոյ պարոնը, որպէս ըստ Սահմանադրութեան ընտրուած նախագահ ընդհանուր ժողովին, քանի որ հրապարակով յանձն էր առել այդ պաշտօնը, բնականաբար չէր կարող չպաշտպանել Սահմանադրութիւնը։ բայց այդ միայն էր, եթէ պիտի լինէր թերի։ նա կարող էր դէմ կենալ մի քանի բռնակալ առաջարկութեանց որ առնուազն խաւարեալք, կարող էր, ասումենք, բայց ընկալ հատարակաց հոսանքի մէջ։ Այնուհետև, մի կողմ թողած Սահմանադրութեան գործը, այդ քննիչ ժողովի առաջին անօրէնութիւնն եղաւ հայկական խօսքը ճնշել, տպագրութեան ազատու-

թիւնը բռնաբարել։ Պ. Սկը Վ. իչենը կամակից էր այս բանին և մեք առ ի սրտէ ցաւումնիք, որովհետև նորան ճանաչումնիք ապրեցաւ ազնուական և ապրելէ մարդ։

Ա՛յո, Հիւսիսափայլը շատ է պահանջում արդեօ Սկը Վ. իչենից, բայց Հիւսիսափայլը ցոյց է տալիս սորանով, թէ շատ է յարգում նորան, որովհետև գործը գործուածոյ մարդից են պահանջում։

Օ՛հարդ և ցաւ, իրողութիւնը այս է, որ այդ ժողովակի կազմուելուց յետոյ, բոլոր ազգային կառավարութիւնը կենտրոնացաւ նորա մէջ. ուրիշ կառավարութիւն չմնաց ոչ տահմանադրական և ոչ արտասահմանի։ Այլ այս միջոցին տարիներ անցան, ազգի տարտամ վիճակը շարունակուեցաւ և ազգային կառավարութիւնը, մնալով անոլոչ և անգլուխ, մեծապէս պատճառ դարձաւ գաւառների անկարգութեանց զօրանալուն, որոնք մորմոքեցուցիչ և աղեկէզ տեսարաններ ներկայացուցին աչք ունեցողի առաջև։

Սուրբ Յակոբի վանքը մնաց աւազակների ձեռք. ազգը արիւն թափել ստիպուեցաւ, Հայաստանի հողը վերստին սկաւ Հայոց արիւնով և դիակներով պղտորատանալ. ազգային կառավարութեան յանձնառուքը հող չտարան։ Վերջոյ, թշուառութեան բաժակի տակ բան չմնաց, սրածութիւն, դաղթականութիւն, յափկամայնի կրօնասիրութիւն, աւեր, յափշտակութիւն, ընդհատումն, և այլն և այլն, իւրեանց բոլոր դժոխային արբանեակներով թափուեցան ազգի վերայ.....

«Աղէտ պատահաց».....

Ա՛յսօր, գրեթէ մի տարի է, որ Սահմանադրութիւնը վաւերացաւ տէրութեան հրովարտակով. տոյժ է, թէպետ ուշ, տոյժ է, այս և այն մտանով խեղացած, այնու ամենայնիւ մի Սահմանադրութիւն, որ ազգի կառավարութիւնը տալիս է հասարակաց ազգի ձեռքը, ազատելով նորան մի քանի բռնակալ թշուառականների լծից։

Հիւսիսափայլը հանդիսաբար յայտնում էր իւր առ ի սրտէ ընդհակառակութիւնը Սահմանադրութեան օգտի համար յայտնի և անյայտ եղբօր աշխատողներին (Հիւսիսափայլին թուում է, թէ անյայտ աշխատողքը ոչ պակաս գտնուեցան իւրեանց արդիւնաւորութեամբ, քան թէ յայտնիքը), Հիւսիսափայլը ընդհակառակ է լե-

նում ազգի ընդհանրութեան առաջև միճարու Սեր վ. իշխելոյ։

Երեսփոխանք ընտրուեցան, Ընդհանուր ժողովը կազմուեցաւ, Պատրիարքը ընտրուեցաւ, Ազգաբաական ժողովը կազմուեցաւ, Թղթակիք միւս խորհուրդները, որ այլապէս կազմուեցան։

Ազգային վարչութեան անիւը սկսաւ կատարել իւր շրջանը։

Նայեց, այդ վարչութիւնը աչքը ձգից արդեօք որ տեսանէր, թէ ի՞նչ վիճակի մէջ է ազգի կացութիւնը գաւառներում։ Կանչը բացից արդեօք լսելու համար ազգի աղեխորով բողոքները, իւր նեղքին հալածողների և հարստահարողների ընդդէմ....

—Օ՜, Մեղուն բաւական չէր պղտնուսա, սա Հիսիսափայլն ալ ուրկէ՞ եկաւ... կեցիք հեղէ, մէյմը ինք զինքնիս գտնանք.... Տակաւին չէք գտած. վախենամենք, մի գուցէ երբեք չգտանէք. երանի՜ թէ սխալուէինք։

Դիմակ պէտք էր։

Ըստ Սահմանադրութեան կազմուած ազգային վարչութիւնը ազգային բարեկարգութիւնը սկսուէ այսօր բռնութեամբ....

«Գէշը գէշով գէշ կըլայ». բարով խելով Մէլուխեան չըներգոյզը այդ վարդապետութիւնը։

Կանչեցէք օրագիր հրատարակողները, ձնշեցէք, խեղդ ըրէք, ձեռագիր առէք, որ բան չգրեն, լռեն, համրանան, պապանձուին, կուրանան, չտեսնեն, չլսեն, խլանան, մի խօսքով, քար և փայտ դառնան (որովհետև անպատեհն անգամ տեսնուէ, ինչ որ ձեզ աչքի առաջև է գործվում), օրագիր հրատարակողք են ազգը տակ ու վեր բերողը....

Հրիտասարդները և Մեղուն, որ մեհեան չափ ճշմեցան Սահմանադրութիւնը պաշտպանելու, պիտի տեսնեն այսօր, որ նոցա պաշտպանած Սահմանադրութեան գործադիրքը Սահմանադրութեան թշնամիների վարմի ցանկութիւնը կատարելու համար, արտաքսման բանակոչութեամբ վարվեցաւ Մեղուի հետ, որ է երիտասարդների և կենդանի ժողովրդի ձեռք քերթողը, ազգի ցաւերի և ուրախութեան ճշմարտապատ յայտարարը։

Ըստ Սահմանադրութեան կազմուած վարչութիւնը արդեն սկսաւ արտականն հնարներով և գաւառապատկի ճանապարհներով իւր բոլոր ոյժը Մեղուի ընդդէմ համաժողովել, և մինչև այն աստիճան անպատուեց իւր անձը, որ սիրտ բռնեց մի ազգային բազմարդիւն օրագրի ընդդէմ բողոքել։ Աւա.....

Այդ սուրբ Սահակ Պարթևն էր հարցնում, իսկ Սուրմակները ուրիշ կերպով մտածում: Այսօր չկան այլևս Սահակ Պարթևներ: «Յաթոռն Մոսխի նաւան գպիրք և փարխանիք»: Այսօր առատ ենք, գեղուն, թաթաղուն, շարժուն. ինչմի՞ն անտարակոյս, Սուրմակներով, Ռուքիշներով, Այսահակներով, որ մի սահմանադրապէս կազմուած վարչութեան վերայ ազդեցութիւն ունին, թէև չէ պիտոյ ունենային «ըստ Սահմանադրութեան»:

Այգը վերստին հրաւիրեց մեծարու Սկը վ. իչէն էֆէնտիին, որ նստի ընդհանուր ժողովի առաջին աթոռը: Ընդհանուր ժողովի առենադպիրը ընտրուած է հոյակապ Օ. Գրիգոր էֆէնտին:

Գաւառների դրութիւնը ներկայացաւ Մեղուն, վասպուրականի անապահով թշուառութիւնքը ստորագրեց Մեղուն, Ագնուստոսի դիմակը վերայից հանեց Մեղուն, Տորոսի խռովութիւնքը պատմեց Մեղուն, արժ. Խրլմեան Մկրտիչ վարդապետին պաշտպանեց Մեղուն, նորա վերայ, դիւերային լռութեան մէջ, հրայան դատարկողների ընդդէմ բողոքեց Մեղուն. գաւառ չձողեց, քաղաք չձողեց, գեղ չձողեց, թաղ չձողեց, ամէն ծակ ու ծուկ մտաւ եղաւ Մեղուն. թո՛ղ մեռնի Մեղուն:

Պատրեցէք այդ հայհոյին, որ իմ ճիւաղադէմ կերպարանքը ամէն օր ինձ ցոյց է տալիս. փշրեցէք նորան..... թո՛ղ վանեցի պօղոսները փառաւորուին, թո՛ղ ախրացու Հոխիմեի Ելուքիւնը ոտքերը ջուրը դնէ, Փրկիչ. թո՛ղ Ըշալուսի գերապատիւ կրօնադրութիւնը, այժմ Ալեպ գտնուող Նիկողոսը, ցնծայ և պարի, թո՛ղ Ագնատիոսի պաշտպանութեան համար հողմացած նամակները գրին Մեղուին, թո՛ղ Ջաքարեան Կարնի մէջ, Սահմանադրութիւնը նաև տէրութեան հրովարտակով հաստատուելոց լեռց, երբ արժ. Խրլմեանը յորդորումներ ժողովուրդը, սիրով և միաբանութեամբ գործ դնել Սահմանադրութիւնը, քարոզէ, թէ ինքն Ամաստանից ուրիշ Սահմանադրութիւն չէ ճանաչում, թո՛ղ նոյնը և ժողովրդին ուսուցանէ.... թո՛ղ վերջապէս ազգը մեռնի ու գերեզման դրուի, միայն..... միայն..... Միայն թէ մեր բանին չխառնուին, մեր մասին չգրեն, մեզ չդատապարտեն, մեր կամքը իրրև Մոսխի պատգամ ընդունեն. «մեր ըրածին կամ ընելիքին վրայ չխօսին».....

Իսկ ձեր «չըրածին և չընելիքին վրայ» կարելի՞ է խօսել, պատասխանելի՞ գեկավարը ազգային վարչութեան. «Ընդհակառակ մեր պիտա-

լու բանն է... փառք Աստուծոյ, ի՞նչ է եղել, օրէ օր ազգերնիս կը յառաջադիմէ կոր (գիտենք, կը դիմէ, բայց դէպ ի կործանումն), քիչ մը պակասութիւնք կան եղեր..... ո՛ւր տեղ չկայ, անոնք ալ կամաց կամաց կը շտկվին.... հիմակու հիմայ աս չափով գոհ ըլլալու է, խոհեմութիւնը անանկ կը պահանջէ. ամենը մէկէն հօպ տէյի կըլլել չըլլար... քչիկ, քչիկ.....— Ազգերնիս կը յառաջադիմէ կոր....

Ազգի զաւակները սրիկաների մատնուած, սրախողխող են լինում իւրեանց մահճակների մէջ, Իգնատիոս եղ ծախելու շահաւէտ առ և տրով է պարապում, նորա արբանեակը շինականի վերջին եղնը առաջ ձգած դէպ ի Իգնատիոսի ադարակն է գնում: Վաղաքական ժողովը Ա՛եղուի քամակից ընկած, միջոց չունի այն արիւնաշաղախ տեսարանների վերայ մի րոպէ իւր աչքը ձգելու, «ազգերնիս կը յառաջադիմէ կոր»:

Ազգի աղջիկները և կանայքը կը ցաւ ու կը բնաթարախին անօրինակ և անլուր ժպրհութեամբ. «ազգերնիս կը յառաջադիմէ կոր». մի քանի կին, մի քանի աղջիկ «կը տատասկին եղեր..... ի՞նչ կըլլայ եղեր... ասդին ալ մխիթարական տեսարանք պակաս են մի. Շողեր հանըմը, Վօլօթիա տատուն Թուղթն ու Թաւլուն առջևնին առած իրենք զուարճանալնէն զատ, ուրիշներուն ալ դառ կու տան»....

Ազգային վարչութեան անդամքը այս զուարճալի «փետելու և փետուելու» տեսարանը թողած, չիմաը են, որ ականջները բառնան հայկական ընդարձակ մաքրասիրութեան և պարկեշտութեան սրատաշարժ բողոքները լսելու. մանաւանդ որ Իգնատիոսը նոցա խնդիրը հանգստացրել է «բոլորը մեծցրած և սուտ բաներ են» գրելով: Ազգերնիս կը յառաջադիմէ՞ կոր:

Այո՛, աստուած Ա՛եղուն, Ա՛շխոյ կարաւանը յառաջ է գնում:

Այո՛, աստուած Ա՛եղուն, Թշուառութեան և հարատահարութեան երեսից սափրուելով, դաղթական այրին հայ չունի իւր լացող որդեկին տալու և արագչին է երանի տալիս, որ նորա ձագերը կուշտ են.

«Ա՛ամէ՛կ, պատառ մի հաց....
— Ո՛ղջյա՛, ի՞նչ տեղից քըղ հացիկ ճարեմ....
Մերիկդ Թաղես, վա՛հ, անօթի ես...
Արգի՛լ, հօրի՞ն զթևերդ Թափ տուէք,

Հօրէն զիմ Մոսեն քնից զարթ տուիր.
Արգիլ, քու ձագեր կուշտ են ու հանգիստ.
Մոսեն հաց կուզէ. չկայ..... կը քաղուի հոգիս.
Մի՛ լար, Մոսե, քուն եղեր Լաւռ.
Դեռ գիշեր մնաձն է, քնիր առաւոտուն.
Օ՜, Բասե, հերիք մեզ թողնես մահրում,
Հերիք քաշես զՀէդ զարիպութիւն.
Քու օգուդ չօձուդ հերերից խեղճ են.
Էս ի՞նչ գառն օր ա, մեռնելու մէջէն
Ձ.քեզի կը կանչեն»:

—Ասացին լացին, լացին ասացին.... վեր կացին երեսնին խաչա-հնքեցին. Աստուա՜ծ, կանչեցին, ձեռք ձեռքի բռնեցին, սկսան քալել կարաւանի ձամփով: (Մեղու թիւ 226.)

«Ազգերնիս կը յառաջադիմէ կոր»:

Բայց ի՞նչ լայ իւր դլուխը ազգային վարչութիւնը. կարօղ է բավանդակ ազգին հաց տալ: Հւսխատախայլի ասածը այդ չէ, Հւսխատախայլը երևութիների ընդդէմ հնազ քարոզող չէ, որ միշտ անհիմն է լինում, բայց Հւսխատախայլը հրատիրում պատճառի ընդդէմ հնազ գործ դնել: «Ի բառնիլ պատճառն լին, բառնի և գործն»: Ազգային վարչութիւնը ոչ միայն խնամք չունի այդ պատճառների հիմքը փորելու, այլև հալածում նորանց, որ ցոյց են տալիս ազգին նորա բուն թշնամիքը: «Սուրբ բռնութիւն», այսօր այս խօսքն ինք մոռացուելով սեսանում ազգային վարչութեան դլուշի վերայ: «Ազգերնիս կը յառաջադիմէ կոր»....

Հ արուեսակներնք դեռ ևս, ազգի վարչութիւնը ազգի. ո՜հ, ծանր է մեզ յիշել անդամ այդ վարչութեան գատապարտելի զանցառութիւնքը և իշխանութեան չարաչար գործադրութիւնը, թող թէ մանրամասն գրել. բայց գիտել, գիտենք, ըստ որում լոյս յերեկով գործուած են այդ բոլոր իրողութիւնքը:

Մեղուի վերայ Պրանը գանգատելուց յառաջ, Հազգային ժողովը կանչել էր բոլոր օրագրատեաններին և առտագրութիւն էր պահանջել, որ այս և այն բանը չգրեն:

Հյն մարդիկը, որոնք ոչ ազգային վարչութեան, ոչ իւրեանց և ոչ ուրիշ առտագրութեան յարգը և կշիռն էին ճանաչում, խակոյն վռեթացան տալ պահանջուած ձեռագիրը, որովհետև հաւատացած էին, թէ այդ բնաւ արդիւք լինելու չէր իւրեանց առաջարկած միջոցով, սորա և նորա բարոյականութեան վերայ մեր

քանլու, որովհետև գիտէին, թէ ինքնիք կանչուած էին միմիայն պարզաձի համար և կանչողների խորհուրդը և գիտութիւնը էապէս ուրիշ մարդոց վերայ էր բևեռուած:

Սենեան չէր կարող նոցա նման թևիթևաբար վարուիլ. Սենեան գիտէր, որ այն ստորագրութիւնը ապագայում մի խայտառակութեան արձանագրութիւն պիտի դառնայ ազգային վարչութեան համար. Սենեան չէր կարող ցանկանալ, որ ինքը ձեռնտու եղած լինէր այդ իրողութեան: Սենեան գիտէր, որ մի բարոյական մարդ ոչ թէ գրաւոր, ձեռագրով, այլ եթէ և լոկ խօսքով խոստանումէ այս կամ այն բանը, իրաւացի թէ անիրաւացի, այնուամենայնիւ պարտ է իւր խօսքին հաւատարիմ ճիւղ և հողմացուցիչ պաշտօն չվարել. Սենեան չտուեց պահանջուած ստորագրութիւնը և իւր առաջնակարգ թերթում հիմնաւոր փաստերով ապացուցեց, թէ ոչքան ծանրալի էր այդ պահանջողութիւնը: Սնոց որ, Սահմանադրութեան մէջ այդպիսի բան չլինելով, երեսփոխանաց ընդհանուր ժողովի վճռով այդ բանը յատաջացած չլինելով, և Վաղաքական ժողովը բնաւ իրաւունք չունէր այդ տեսակ պատասխանն պահանջողութեան:

Վաղաքական ժողովի պատասխանը, երևի, այն ծեծողիչ ֆաֆոսէէն էր, որ տեսել է Սենեան ատիկանարանի մէջ և որոյ մասին յիշում իւր 226 համարում:

Ա՛շմարիտ ասելով, մեք ամաչում ենք փոխանակ քաղաքական ժողովին:

Ոչքան մեք յիշում ենք, հետևեալ բաներիս մասին էր պահանջուած ստորագրութիւնը, ուստի և երբեք չհրաժարեցաւ Սենեան. 1) Կրօնի ընդդէմ չգրել. 2) Սահմանադրութեան ընդդէմ չգրել. (բայց Սահմանադրութեան ընդդէմ ցրցնել նկրելի է Վաղաքական ժողովին). 3) Ազգային վարչութեան «ըրածին կամ ընելիքին վրայ» չգրել և 4) անձնական պատուի չդիպչել:

Սենեան, կրօնը և Սահմանադրութիւնը միշտ պաշտպանած լինելով նաև այն ալէկոծեալ ժամանակներում, երբ մի քանի հայկական մարդիկ ամենայն կերպով թշնամանում էին երկրորդը, և դատանի դատաճանութեամբ փորում էին առաջնի հիմքը, նաև այն փոթորկալից միջոցներում, երբ ոմանք այժմեան ազգային վարչութեան անդամներից, ընտրած լինելով Սահմանադրութեան հիմամբ, մնհուշակ թշնամի էին Սահմանադրութեան, — Սենեան

ինչ պատճառով պիտի սաորագրութիւն տար, թէ Կրօնի և Սահմանադրութեան ընդդէմ չէ դրելու, երբ, ոչ թէ միայն այդ հոդով դրիչ շարժած չէր, այլ դորա հակառակ, ինչպէս ասացինք, միշտ պաշտպանած էր և՛ Կրօնը և՛ Սահմանադրութիւնը, և մինչև այն աստիճան, որ Սահմանադրութիւնը և հասարակաց ազգի անկողոպտելի իրաւունքը պաշտպանելու համար արժանի եղաւ վերոյիշեալ հայկաստակների մանուածեամբ Դուռը կանչուելու և յանդիմանուելու,

Ա՛եղուն ի բնէ անտի Սահմանադրութեան պաշտպան և սահմանադրական վարչութեան ջատագով լինելով, չէր կարող երբէք ընդդէմ վարուիլ բուն Սահմանադրութեան, ապօրինի առաջարկուած թղթեր սաորագրելով. «ազգային վարչութեան ըրած ծին կամ ընելիքին» վրայ չգրելու պնատուէրը, Սահմանադրութեան ընդդէմ մի ձեռներէցութիւն էր, ուստի և Ա՛եղուն իշխանութիւն ունէր ձեռագիր չտալ:

Ռովանդակ աշխարհի երեսին եղած սահմանադրական կառավարութեանց մէջ բացարձակ պիժը դէպքին տակ ձեռքումն է. բայց դիտելի է, որ սահմանադրութեանց մէջ մի այսպիսի իրաւունք դէպքին տակ ձեռքում, է մի անփախչելի չար և ոչ դրական բարի. ենթադրվում է, թէ մեծագոյն մասն աւելի շուտով կարող է լինել ամբողջ ընկերութեան կատէ յայտարարը, քան թէ փոքրագոյն մասը: Բայց պիտոյ չէ մոռանալ, որ բազմութիւնը Սահմանադրութեան տուած իրաւունքով յառաջ մղելով իւր կամքը, շատ անգամ ճնշումէ փոքրագոյն մասին ոչ միայն կամքը, այլ երբեմն և իրաւունքը:

Ընդհանուր Սահմանադրութեան մէջ հիմնական կանոն է մեծագոյն մասը, բայց փոքրագոյն մասը կամ թերևս լոկ մի երեսփոխան, լոկ մի անգամ այս կամ այն ժողովի, ունի՞ իրաւունք, հրապարակ հանել իւր դատողութիւնը ընդդէմ մեծագոյն մասի սրած անօրէնութեան, թէ՞ ոչ:

Խնդիրը այն տեղ չէ, թէ ո՞ր կողմումն է ճշմարտութիւնը, այլ թէ այդ միայնակ երեսփոխանը կարո՞ղ է հասարակութեան դատաստանին ներկայացնել իւր կարծիքը և մեծագոյն մասին վճիռը, թէ՞ ոչ:

Եթէ բացատրար պիտի պատասխանեն այս հարցմունքին, ապա ուրեմն թո՛ղ հրատարակեն, թէ ազգի Սահմանադրութիւնը

ուրիշ բան չէ, եթէ ոչ ֆ-ած պոռ. իսկ եթէ գոնէ ամաչելուց պիտի խոստովանին, թէ կայ այդ ազատութիւնը, այն ժամանակ երկրորդ կէտին ենք յառաջ բերում: Մի երեսփոխան, կամ մի անգամ ժողովից դուրս, իւր անձնական կարծիքի վերաբերութեամբ, որ իրաւունքով աւելի արտօնութիւն ունի քան թէ անդամ և երեսփոխան չեղողը. եթէ մեծագոյն մասը մերժելով նորա կարծիքը, իւր կամքն է յառաջ տարել մի որոշեալ կէտի մէջ, այդ կէտի վերաբերութեամբ յաղթահարուած փոքրագոյն մասը կամ մի անգամը ի՞նչ բանով աւելի է քան թէ երեսփոխան կամ անգամ չեղողը: Յայտնի է, թէ համօրէն ազգը բաղկացնող իւրաքանչիւր անձը հաւասար իրաւունք ունի ազգային կէտերի մէջ. յայտնի է, թէ մեծագոյն մասի ձեռքով մի կէտիր լուծուելուց յետոյ, փոքրագոյն մասը նոյն կէտի վերաբերութեամբ բնաւ աւելի ոյժ չունի, քան թէ անգամ չեղողը. այդ եթէ նա իրաւունք ունի այն կէտի վերայ խօսել (ինչպէս և պիտի ունենայ), օրագրատէրը ոչ օրէնքով զրկուած հասարակաց ազգի ունեցած իրաւունքից:

Ազգային վարչութիւնը փակել կամելով օրագիրների բերանը, կասկածանքի տակ է ձգում իւր անձը հասարակաց ազգի պատասխանի առաջև. պատճառ, ով որ բռնութիւն է գործ դնում, նա երկիւղ ունի, իսկ որ վախենում է, նա մաքուր չէ. նա լռելեայն խոստովանում է իւր դատապարտելի անարդարութիւնը, որ ամեն օրագրական խօսքից ազդու է և ժողովրդին զգալի: Ոչ թէ ասում է, թէ այսքանս պարտական էին դիտենալ նորա, որ ձեռք են ձգում ազգային գեկը կառավարելու:

Ինչ որ վերաբերում է անձնական պատուի չդիպչելու մասին, և այ առաւել անտեղի է, եթէ Քաղաքական ժողովը պահանջում է ձեռագիր: Ընկն մարդը միայն կարող է բողոքել, որոյ պատիւը վնասուած կերպով դատ բանալ Սեղանի ընդդէմ: Որ և իցէ կառավարութիւն կարող է օրէնք դնել այս կամ այն բանի մասին և պատուհասներ դատապարտել, բայց ոչ մի կառավարութիւն չէ պահանջում, որ ազգը սառցագրութիւն տայ այս և այն օրէնքը պահե-

լու, որովհետեւ, եթէ պահանջէր, պիտի ծաղը ալած լինէր իւր օրէնքը, ցոյց տալով թէ դժբ օրէնքի մէջ չէ, այլ ստորագրողն ձեռագրի մէջ եւ այդ դիպուածումն նա կարող էր դատապարտուիլ, ոչ որպէս օրինազանց, այլ իբրեւ ուխտադրուժ։ Դատ ի սորանից, անձնական պատիւ եւ նմանապիսի բաներուն վերաբերեալ դատաստանը ազգային նիզքին դործ չլինելով, այո՛, եւ Քաղաքական վարչութենից դուրս, ինչպէս Մեղուն, նոյնպէս եւ մի այլ մարդ կարող է անպատուել իւր ընկերը, բայց դորա համար կայ տէրութեան դատաստան եւ օրէնք, որ առանին Սահմանադրութենից մի փոքր տարբեր է, կարծենք։ Նա մեզ թուում է, թէ նաեւ տաճիկ ատեանը աւելի լայնասիրտ է, քան թէ ազգային վարչութիւնը, ըստ որում Մեղուի հրատարակողը, Քաղաքական ժողովի մեծադիր դանդատներից յետոյ, Դուռը երթալով եւ այն տեղ «մարդասիրական քաղցր ընդունելութեան հանդիպելով» վերադառնում է խաղաղութեամբ իւր տունը. իսկ թէ Մեղուն սրդելուած չէ, դորա ապացոյց կարող է լինել նոյն իսկ Մեղուի թերթը, ուր այս անցքերի պատմութիւնը դրած է ընթերցողի առաջև։

Մենք միշտ դատապարտել ենք, երբ մի մարդ որնուէ օտարի պաշտպանութիւնը, բայց նոյնպէս դատապարտել ենք եւ դեռ ևս պիտի դատապարտենք ազգային անպիտան գործակալքը, որ իւրեանց լուծը օտարի լծից շատ առաւել ծանրացնելով, ստիպում են խեղճ ազգը օտարի լծի վերայ նայիլ, որպէս մի երանացուցիչ քաղցր բեռի վերայ։ Մեր ազգի բոլոր թշուառութեան աղբիւրը այս բանի մէջ է ահա։ Ընտաւը ջարդող կայնի կոթը անտառի փայտիցն է լինում միշտ։

Լաւ կ'ընթանար վարչութիւնը, եթէ իւր ուշադրութիւնը դարձնէր մարդոց պատիւը ստուգապէս վշտացողների վերայ, եւ ոչ այնպիսի տեղում, որ բնաւ «աւազակների այր» չէ, եւ որոյ պատիւը ապաստան է այսօր վարչութեան ժրադլխութեանը։

Վարչութիւնը չէր լսում, երբ Ոսկեհակը Խոսկիտարի բեմերն էրթնդեցնում, աղնիւ Մխիթարին ընդդէմ յոփաբանելով. «Իրենք պիտի տան եղեր պատիժը, տէրութիւնն է տուէր»։ Ո՞րոս զքեզ։ Մխիթարիս եւ ոչ կօշկիների խրատը արժանի ես լուծանել։ Մխիթարին կարօտ չէ նոր ի նորոյ ընծայուելու ազգին, նա կարօտ չէ եւ ընծայութեան թղթերի, նաեւ աղնիւ մարդերի կողմից, թող թէ մի շաղղակեր ազուաւից։ Մխիթարին «զբարւոք

պատերազմին պատերազմեցաւ, պհաւատան պահեաց». իսկ ո՞վ է Աբրահակը, արժանայիշատակ Թադևոսեանցի կնքած եղէ ճակատը: Ո՜հ, պիտոյ է Աբրահա գնալ նորա պատմութիւնը իմանալու համար. Օգոստոսի քարերը լեզո՜ւ ունին... և Երուսաղէմի նուիրակ Սահակ վարդապետի վերջին րոպէների պատմութիւնը քաջ գիտեն..... որ ընթեռնուն, ի միտ առցէ:

Եւ այդպիսի մի մարդ.... ողբովի՜մ քեզ, եկեղեցի՛ Հայաստանեայց. մեր գրիչը չէ կամենում գրել այն պաշտօնի անունը, որ նա ունի այսօր:

Հայս ասելով, բնաւ դէպ ի բանութիւն չենք հրաւիրում վարչութիւնը, այլ որ տեսչութեան հաւատացած մի սուրբ տեղի պատիւը պահէ և իւր ստորադրած ստահակին խրատ տայ, որ Մինասեան ընդդէմ թէ ասելիք ունի, այն տեղ չասէ, այլ օրագիրների մէջ, և ոչ իւր սատուրնական ֆնջոյքներում. տարին տասներկու ամիս աբեղաթողի ձեռ է նոցա համար, ուստի և միշտ կարող է մոլիլ:

Հայց բուն «անձնական պատուի չդպչելու» խնդիրը քննելով, տեսնում ենք, որ դա մի խայծ է, վարչութեան բանակալութեան կարթի ծայրը անցուցած և տղայական ու ծիծաղաշարժ մի խայծ. պատճառ, անձնական պատուի չդպչել հասկացել են և պիտի հասկանան, երբ մի օրագիր հրապարակ է հանում այս կամ այն պաշտօնեան անյին ըստ պաշտօնի ընթացքն-ընե-ը. ապա թէ ոչ, արդեօք որո՞յ պատիւը վշտացուցին: Ո՛չ ոք կարող է մարդու պատիւը արատաւորել. «Ո՛չ ոք վնասի, եթէ ոչ յիւրմէ». իսկ արդ, եթէ մարդը ինքը իւր գործերով արատաւորել է իւր պաշտօնատարութիւնը, իւր անձը. ասենք միանգամայն, եթէ այնու ամենայնիւ ոչ միայն յանցաւոր չէ նա, այլև վարչութեան յարգութեանը արժանի, այդ գործերը յայտնի և յանտանէ հրապարակի առաջև դնո՞ղն է պատժի և դատապարտութեան արժանին: Ո՞ր օրէնքով, ի՞նչ արդարութեամբ: — Հը՜մ.....

«Եւ օրէնս արդարութեան բանութիւն մեր եղեցի... դարա«նակաւ լեցուք արդարոյն, զի գժպհի եղև մեզ և հակառակ կայ «գործոց մերոց, և նախատինս դնէ մեզ գյանցանս օրինացն և «բամբասէ.... ծանր է մեզ և տեսանելն զնա, զի աննման են այ«լոց կեանք նորա և այլազգի շաւիղք նորա: Ի գարշութիւն հա«մարեցաք նմա, և խորշի ի ճանապարհաց մերոց, իբրև ի պղծու-

«Թեանց..... Ա՜հ՛ւ խայտառակութեան գատեացուք վնա... ։ Իանալե՜..... .

Այս բոլոր գրուածը կատարելուց յետոյ, Աեղուի թաղմանից վերադառնալով, «խահվէ մըն ալ առէք», գուցէ այն ժամանակ «ինք զինքներդ գտնաք» և ազգի լռամածութեան վերայ դարձնէք դիմէ քառորդը այն գործատ ու արթուն ուշադրութեան, որ ունիք Աեղուի վերայ:

Ասայց, խրատ մի տամ ձեզ, զգո՛յշ կացէք, որ Աեղուից վախչելով, եգիպտական շանաճանճից չբռնուիք, որ մեղուի նման մեղը և մոմ չտալուց յետոյ, կարող է և առ ի մահ խայթել: Աչ ցայն չափ պիտի վշտանայիք, եթէ աերութեան առթելով երեսի վերայ մնային ազգի գործերը: Աչ այնքան զայրանայիք, եթէ կառավարութենից հալածուելը տպագրութեան ազատութիւնը. բայց մինչև մահ տրտում ենք, երբ լոյս ցերեկով տեսանում ենք, որ ազգի ցաւերին դարման տանելու խորհրդով ընտրած պարոնները իւրեանց մատով հանում են ազգի աչքը. դառն արտասուք են թափվում մեր աչքից, տեսանելով որ այդ պարոնները, այո՛, կառավարութեան մտքից ևս չանցած բռնութիւններ են հնարում ընդդէմ ազգին, փոխանակ արդէն եղածի դառնութիւնը ամոքելու:

«Ո՜տայր զգլուխս իմ ՚ի ջուր և զաչս յաղբիւրս արտասուաց և նստեալ լայի զթշուառութիւն ազգիս»:

Ողջա՛մ ըքեզ, ։այո՛ց աշխարհ, ողջա՛մ ըքեզ, հանուրց հիւսիսականաց վհատոյն:

Ողջո՛ւմ քեզ, եկեղեցի՛ ։այասանեայց.....

—

Ա՛ի քանի յետսընթաց օրագիրք տակաւին ուսած չլինելով, թէ ճշմարտութեան չափը բարեկամութիւնը կամ թշնամութիւնը չէ, թէ երկու մարդ կարող են միմեանց ներհակ կարծիք ունենալ, առանց միմեանց թշնամի լինելու, առանց միմեանց զլխին անէծք կարդալու, թև առին ու թռան, որպէս զի աւելի որոշ կերպով ցոյց տան ազգի ողջամիտ մասին իւրեանց որպիսութիւնը և ընտրած ճանապարհների ուղղութիւնը:

Ընշալոյս. 14 դեկտեմբ. 1863. թիւ. 716. Զմիւռնիա:

«Աեղու հանդիսին խմբագիրը Ազգաբարեկան ժողովոյն պէտ-

«եքրեան պնօքեան-ըեանօը հնազանդիլ չուզելով, նոյն ազգային մե-

«Ճարպոյ ժողովը յատուկ յայտագրով մը խնդրեց Խարձրագոյն «Դառնէն, որ հրաման տայ առաժամանակեայ կերպիւ դադրեցնել «լու յիշեալ հանդիսի հրատարակութիւնը»:

Ելաղդ դէպ ի բարին, Ընշալոյս:

Ո՞յր են և ի՞նչ են Ազգասիրական ժողովի ազգասիրական անօթևնութիւնքը, որոց չէ կամեցել հնազանդիլ Մեղուն. ե՛րբ և ո՞ւր: Մեք կարծումնք, թէ մաքուր խղճմտանքը պիտի լինի մի օրագիր հրատարակողն ուղեցոյց և ոչ թշնամական ախտերը և բոլբոսած դաժանութիւնքը: Մի՞ թէ կարող էին պատիւ բերել Ընշալուսին նորա անհիմն խօսքերը, որ մեք մէջ բերեցինք. մի՞ թէ ստուգապէս հաւատումէ Ընշալոյսը, թէ կարդացողը չէ հասկանալու, թէ ինչ հոգուց էին բղխած այն տողերը:

Ընդ և Մասիսի 617 համարի մէջ Մեղուի մասին հրատարակած.

«Մեղու հանդիսին խմբագիրը Ազգասիրական ժողովէն քա«նիցս անգամ ժողովի ներկայանալու հրաւէր ընդունելով մնիկ «չընելուն և չներկայանալուն համար, Ազգասիրական ժողովը յա«տուկ յայտագրով մը յիշեալ թերթին առաժամանակեայ դադա«րումը խնդրեց Խարձ. Դառնէն»:

Մասիս, եթէ քեզ մի փոքրանք պատահէր և ստուգապէս դադարէիր, Հրեսիսափայլը երաշխաւոր է, որ Մեղուն չէր լինելու քո դժբաղդութեան փողահարը, ուր միայ, որ չեղած հրաւէրներ հնարել և մի խօսքով մի ամբողջ վիպասանութիւն: (Նրես 226.)

Ստոյգ եղելութիւնը պատմեց Մեղուն համարով և, թո՛ղ այս, նոքա, որ ձեր շրջակայքումն են, այլև նոքա, որ այս հեռաւոր հիւսիսումն, երբ համեմատեցին ստոյգ իրողութեան ստոյգ պատմութիւնը ձեր ստուած տեղեկութեան հետ, հասկացան բանի զօրութիւնը և չկարողացան ձեզ դովել:

Ինչո՞ւ այդ տեսակ գործերով անպատուումէք առ հասարակ օրագիրքը, տեղիք տալով ամբոխին կարծել — ըստ որում խելացի մարդիկ կարօտ չեն առաջնորդի — որպէս թէ օրագրի պաշտօնն է իւր ախտերին ծառայելով, ամենայն նուաստութիւն յանձն առնուլ.....

Ս. Նազարեանց.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՆՈՐԱԳՈՅՆ ԺԱՄԱՆԱԿԻ

ՄԻՆՉԵՒ ՍԿԻԶԲԸ 19-ԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ.

Ա՛րդկային հոգին, արդէն երկար վերջին դարերի սկզբից, մանուկ և անընդդիմանալի զօրութեամբ ձգտումէր կրթելու և ազատապէս կերպարանագործելու իւր բոլոր կարողութիւնները: Ա՛յ մի ժամանակ դիտութեան լոյսը չէր այնպէս ընդհանրապէս տարածուած, ինչպէս այս դարերի ընթացքում: Պատճառ, երէկ հնութիւնը ցուցանումէ մեզ միայն «ն է կրթեալ ազգեր և սոցա մէջ մի քանի հատուն մտածողներ միայն, ապա մեր օրերում, գոնեայ ձգտողութիւնը դէպ ի աւելի մեծ դիտութիւն և իմացական կրթութիւն, դարձել է Եւրոպայում մի ընդհանրապէս ղգալի կարիք և մի հասարակաց ժառանգութիւն աւելի ընտիր մարդկութեան: Գիտութիւնների շրջանակը, դուրս գալով հնութեան նեղ ու փակ սահմանից, ընդարձակուել է դէպ ի դուրս և կարգադրուելով բոլորուել է դէպ ի ներս: Նոցա նոյն իսկ դպրոցական ձևակերպութիւնը առաջնորդից դէպ ի հիմնաւորութիւն նոցա մշակութեան մէջ, մինչև, առանց վեռասելու այս հիմնաւորութեանը, նոցա արտաքին կերպարանքն էս սկսաւ կամայ կամայ դառնալ աւելի կենսալից և համոյական: Եւրոպական ազգերի լեզու«ը այս ժամանակամիջոցում մաքրազարդուելով ստացան այնպիսի կատարելութիւն, որ Եւրոպայի արևմտեան լեզուների առաւել մեծ մասում յատաջացան հարուստ բնաիր մա-

տնտապիրները, որ կարող էին, իբրև օրինակ գալոց ազգերի համար, ունցանել դէպ ի աւելի զարդացած ապագայքը: — Կրծը այնուհետև շարժվում էր հոգևոր քահանայապետութեան նեղոց ձևերի մէջ. եկեղեցական ուղղադրծութիւնը չանջատեց այն արդելառիթ կապանքը, որոց մէջ միջին դարը կաշկանդել էր մարդերի ազատ փորձողական և քննողական հոգին: Ա յսպէս ահա մի նոր զօրութիւն և մի զուարթ կեանք յառաջացաւ մաքրած կրօնից, որ նոյնպէս լաւ լուսաւորեց հասկացողութիւնը, ինչպէս ջերմացրեց սիրտը: — Ճշդապրծութիւնը նոյնքան էս կրթեցին ախորժակը, որչափ հոգին և սիրտը ընդունական շինեցին վսեմ և ազնիւ բաների, և արդիւնաւէտ կերպով ընդդէմ դուրս եկան կոպիտ նիւթապաշտութեանը: Մարդերի ընդհանուր արդիւնութիւնքը նոյն չափով բարեկարգուեցան, որ չափով յառաջադէմ էր լոյսը վերածնուած եկեղեցու և գիտութիւնների անչափելի լայնածաւալ շրջանակի մէջ: Ու սակաւ սակաւ, քաղաքագործուած շատ տեղութիւնների մէջ թուլացուեցան ծառայութիւնների և անտանելի աշխատութեան հարկերի շղթայքը, որ միջին դարում կանուած, ճանրանուէին ստորին ժողովրդականդերի վերայ և ճնշում էին երկրագործութիւնը: Աշխ տեղերին կրծը ուստի յառաջացաւ ամենայն ճշմարիտ կրթութիւն և լուսաւորութիւն, ամենայն վերին կեանք վաստակասիրութեան, վաճառականութեան, ուսումնականութեան և ճարտարութեան մէջ, տեսանում իւր իրաւունքը մի մանով կամաց կամաց խոստովանուած ամենուանների առանձնաշնորհ կարգերի և հոգևոր դասու կողմից, այս և այն տէրութիւններում. նա զգում իւր ազդեցութիւնը եւրոպական ազգերի և տէրութիւնների իմացական և քաղաքական կերպարանափոխութեան վերայ: Դա պահպանում իւր մէջ յուսոյ սերմեր մի աւելի լաւ ապագայի և մեր մարդկային սեռի յառաջադիմութեան ամեն ճշմարիտ, զեղեցիկ և բարի բանի մէջ: Ազգերի օրինաւորութիւնը մանուկ ժամանակի հոգու ազդեցութեան տակ ստացան մի մեղմ բնաւորութիւն, հետ զհետէ ստուգեցին վերահասութեամբ, որ ամենայն քաղաքագործուած ազգ և ամեն մի ինքնիշխան տէրութիւն 19 դարու հասել էր այն զարդացման աստիճանին, որ կարող էր ունենալ ինքնուրոյն օրինաւորութիւն, որ արդարև, օգտակար լինելու համար, պիտի յառաջանար ոչ թէ վերացական սկզբունքներից, այլ ազգային հոգու ներքին հու-

թենից, այն կրթութեան աստիճանի վերայ, որին հասել էր տէրութիւնը, և որա հետ շատ լաւ կարելի էր կապակցել մի հիմնաւոր ուսումնասիրութիւն հնութեան և միջնի դարու տէրութիւնների, առանց չափելու և ձևելու ներկայ ժամանակս վաղուց անցած գնացած ժամանակների իրաւունքով։ Ա՛յն գարշելի տանջանքը բանտերի մէջ չքացաւ տէրութիւնների մեծ մասնուամ. սև փականութիւնը ապահովուեցաւ. քաղաքացիքը շատ տէրութիւնների մէջ, հաւասարապատիւ էին միմեանց, օրէնքի առաջև։

Ա՛ն, գրեթէ տեսութեամբ անբովանդակելի է շարժակարգը այն ազնիւ տղամարդերի, որ երեք վերջին դարերի ընթացքում, խօսքով, դրով և գործով հիմնաւորել են մարդկութեան յաւաջադիմութիւնը դէպ ի աւելի լաւը։ Ո՞վ կարող էր տալ նոցա տեղնութիւնը, առանց յիշելու նոցա անմահ արդիւնաւորութիւնը։ Ո՛չ մի ճիւղ մարդկային գործականութեան և մարդկային դիտութեան չմնաց անմշակ այս բովանդակ ժամանակամիջոցում. շատերը գոցանից տարուեցան հասուցուեցան մի այնպիսի բարձր աստիճանի, որ գուշակուած անգամ չէր հնութեան մէջ. շատերը աներևոյթ կերպարանափոխ արուեցան, շատերը նոր ի նորոյ յայտնագործուեցան և ճաւալուեցան աւելի և աւելի։ — Ա՛յլ ոչ լոյս կայ, այն տեղ կայ և առաւել։ Եւ պատմութիւնը իւր դատաւորական պաշտօնը ապրի գործելի և ջանադրութիւնների վերայ պիտի աչառութեամբ միայն լցուցանէր, և այդպէս ինքը կրճատէր այն արդիւնաւորութիւնը, որ դրած է նորա կոչման մէջ, եթէ կամենար նա լուսթեան տալ ժամանակների մնացեալ կողմերը և պակասաւորութիւնքը։ Հաւանութիւն թէ վերանորոգութեան ժամանակի շէնքում արդէն, ապուշ-ֆրանսական վէճաբերութիւն երկպառակից ազգերը, և պատանեաբանական կռիւ ու աղմուկ զայրացրից սիրտերը. մի թիւր քաղաքական իմաստութիւն, որին, սակաւ չէ պատահել, որ թևարկու լինէր եղուխեան գահասիրութիւն, կամ խորամանկ աշխատհագիտութիւն, զրգռեց մի ազգի նոյն իսկ ցեղակիցքը ընդդէմ միմեանց և վտանգի մէջ ձգեց եւրոպական համակշռութեան կերպարանագործութիւնը. նեղքին քաղաքավարութեան մէջ ծառայուածին անպիտան տեսութիւնների. հոհոպարպոնեան պատրանքը, ոչ առանց պարտակցութեան Կարոլոս հինգերորդից Ինգենսբուրգի ժողովով 1532 թ. հաստատած քաղաքական օրէնքի (որ ասվում պատմութեան մէջ և Կար օ-

լինա) ստացաւ մի կոշտ, վրէժխնդրութիւն և անդթութիւն յուսցանող բնաւորութիւն և կախարդների վերայ բացած ստեանններ՝ հատաւ ծայրացեալ խոտորմանը իւր բուն խորհրդից, մինչև վերջապէս այս ժամանակի շրջանի եկեղեցի մեղմեցաւ. քնապաշտ էնթուզիազմը ունէին մի երկարատև պատերազմ պատերազմելու ընդդէմ թշնամիներին այն անհերքելի ճշմարտութեան, թէ նոքա աստենքեան կարող էին ջերմացնել սիրտերը դէպ ի աստուածեղէնը և լուսաւորել հոգիքը. էնթուզիազմը, որին ծառայութիւնին շատ և բան մասին հանձարեղ Ընդլեացիք, Ֆրանսիական սրամտութեամբ և քաղցր ու գրաւիչ կերպարանքով սիրելի կացուցած, այնպէս որ և Վերմանացոյ նմանողութիւնը չկարողացաւ ընդդիմանալ դորան, այդ վստահամտութիւնը ամեն հնաոր գործ ղրեց, կրօնական հաւատը իրրև մի բնական որիչ յաւելուած իմացական նութեան վերայ, ամենևին բաժանել սորանից և ոչ առանց ծանծուկ արհամարհութեան ձգել նորան իրրև խաղալիք կամ ստութեական պատկեր անլուսաւոր բազմութեան առաջև. վերջապէս բուրեբլ այլանդակութիւնը, պատանեութեամ աւելի շողշողուն, քան թէ ճշմարտապէս ճաշակաւոր ձևերով, պատշաճի խաթեբայական աներևոյթի տակ ծածկած և խղճմտանքի ու կրօնի բարոյականութեան խրատներից աղաւաղելով, կամ վայելչութիւնների աղմկի ու արբեցման մէջ, կամ թէ այն սուտ կարծիքի մէջ, թէ հանդիսաւոր մանակցութեամբ եկեղեցու արարողութիւններին կարող էին լուսցանել քրիստոնէութեան և բարոյականութեան պարտքը — այդ այլանդակութիւնը բարքերի մեծ էր սիրապետելու և ազգերի բնաւորական կեանքին. ժողովրդի նեղքին կազմուածը բազմօրինակաբար թուլացուեցաւ, հին կապարանքը և պաշտպանարանքը քայքայուեցան. — եթէ այս բոլորս կշռուեն, ապա դորանով կարողութիւն ենք ստանում չափել ու իմանալ, թէ ինչպէս մեծ, ինչպէս ապրու և ինչպէս գործունեայ էին այն հանճարները, որ 18 երորդ դարու երկրորդ կիսամեանում և 19 երորդի առաջին ևբնաւն աստղիներում թէ յաղթահարեցին այն վնասակար բաները, թէ առեղծագործեցին այնքան բազմօրինակ և պատուական բաներ, և թէ հիմք ղրեցին այն բաներին, որով որ տեղիք ունի պարծենալու այն ժամանակը եւրոպական մարդկութեան: Չար սերմի չար պտուղները առաւելապէս հնձել է միայն մեր ժամանակը:

Ընդհակառակ, այնու ամենայնիւ անընդդիմանալի, ցած

գլորուեցաւ ֆէլէոֆայուէնեան դպրոցական շինուածը, որ միջին դասրում կառուցած էր։ Յովսէփ և Թէոփրաստիան ոչ ինքը անմիջապէս գործունեայ դառնուեցաւ փիլիսոփայութեան մասին, այնուամենայնիւ նա զարթեցրեց փիլիսոփայական հետաքննութեան բուն սէրը։ Արդէն եկեղեցու բարեկարգութենից յառաջ վերստին կենդանացած դիտութիւնքը Իտալիայի մէջ, և նոյն տեղում յայտնի հանգամանքի տակ նորոգուելով պղատոնական փիլիսոփայութիւնը, պատճառ տուեցին աւելի փոքր փոքր նուաղելու Արիստոտելի տիրապետութեանը։ Յովսէփ և Լութերը սիրող չէր դպրոցականների արիստոտելեան փիլիսոփայութեանը, այնուամենայնիւ Մելանքթոնը տակաւին յաճախ պէտք էր ածում դորան դաւանաբանական վարդապետութեան մէջ։ Այդ բոլոր բնաւորութիւնը եկեղեցու բարեկարգութեան և նոր զարթած և ընդհանրապէս տարածուած հոգին փորձողութեան և քննութեան կրօնական ճշմարտութիւնների, ձեռնտու էր յեղափոխելու մինչև այն ժամանակ նախապատիւ եղած փիլիսոփայական ոճը, թէև ծառայական հետևողութիւնը եկեղեցական վարդապետութեան ոճին, անընդհատ կռիւները բաժանուած եկեղեցիների մէջ և սաստիկ վէճերը նոյն իսկ պրօտեստանտեան եկեղեցու ներսում, սահմանափակեցին առաւել արագ և առաւել ընդարձակ յառաջադիմութիւնը մի բարեկարգուած և աւելի մաքուր փիլիսոփայութեան 16 երրորդ դարու վերջին երրորդամասնում և 17 երորդ դարու ընթացքում։ Այո՛, և ապոստաթմատոնեանը և ձուինգլոնեանը այդ վերջին երկք դարերի մէջ գտան իւրեանց հետևողք և տարածողք, զոր օրինակ, Յովհաննէս Պարացելզոս (մեռած 1541 ին), Վալենտին Վայգել (մեռ. 1588 ին), Յակոբ Բեօմէ (մեռ. 1524 ին) և Շվենքբօրղ (մեռ. 1772 ին)։ Այո՛, տակաւին 18 դարու վերջումը և 19 երորդի սկզբում հաճելի էին մոլորութիւնքը Օզենքիյցեանց) և մագնիսագործների (magnétiseurs), մի փիլիսոփայութիւն, որ խորասոյզ էր լինում անպայմանաւորի մէջ կամ թէ դպրոցական ցամաքութեան, մթութեան և անաջողակու-*

*) Սա էր մի վարդապետական կարգ, որոյ հիմնարկուն եղած է Վալենտին Անդրէաս 1610 թուակ., որ դարս երևեցաւ ընդդէմ իւր դարու մոլորութեանը, սիրով և երկիւղածութեամբ յանդիմանելով այն կրօնաւորոյց վարդապետքը, որ Լութերականութեան վերայ սկսել էին մոգանալ քրիստոնէութիւնը, ինչպես, յաւելի է ասել, մեր Հայերը Լուսաւորչականութեան վերայ կամին մոգանալ քրիստոնէութիւնը։ Վալենտին Անդրէասի կարգը պիտոյ է լինէր մի հանդարտ ուխտ և դառնար աղը աշխարհի. սովորական

թեան, որ և Քրիստոնէութիւնը չարաչար գոյծ էր դնում իւր մուխ վարդապետութիւնների համար, որպէս զի ծածկամտութեան խայտաճամուկ գոյներով փոխարինէ հիմնաւոր քննութիւնը և ծաւալումը մաքրազարդած աւետարանական ճշմարտութեան։ Այո՛, որպէս հետևանք այս ծածկամտութեան, դէպ 18 երորդ դարու վերջը դուրս յարձակուեցաւ մի թշուառ ու չքաւոր բանաստեղծութիւն, յատկապէս Գերմանիայում, որ կաթոլիկեան և կեղեցու սուրբերի կարծիքական հրաշքներով և գործերով խաղ էր առնում և որոնումէր իւր չքաւորութիւնը ծածկել կեղծաւոր երկիւղած զգացմունքի վարագուրի տակ

Դորա հակառակ, արդէն 17 երորդ դարուց ականաւոր տղամարդիք մի նոր առանձին ասպարէզ բացեցին փիլիսոփայութեան մէջ։ Օրոր օրինակ, անգլիացի Ֆրանցիսկոս Բաքոն Վերուլամեան (մեռ. 1626 ին) յետ դարձաւ դէպ ի փորձը և բնական հիմնականքը և փորձ փորձեց մի — արդարև ըստ մեծի մասին ընտրողական (էկլեքտիկական) և օդտաքարող փիլիսոփայութեամբ նոր կարգաւորել և կերպարանել բովանդակ սահմանը մարդկային գիտութեան։ Նորա հակառակ, Ֆրանսիացի Պարտեզիոսը (մեռ. 1650 ին) դարձաւ հիմնարկու մի դաւանաբանական փիլիսոփայութեան, որոյ մէջ տարբերութիւնը մարմնոյ և հոգու մէջ մեծ, դիտական ճշդութեամբ աչքի տակ պահուեցաւ, և փիլիսոփայութեան բնաւորութիւնը ազատ քննողութեան հոգով աւելի և աւելի բաժանուեցաւ եկեղեցու վարդապետութեան կարգից, բայց և մտահայեաց փիլիսոփայութեան մէջ չափից դուրս շատ բան փոխադրուեցաւ Վանաքաբանութենից։ Աւելի համարձակ և խորին տեսութեամբ, քան թէ նորա նախորդքը, միջամուխ եղաւ Հրէայ Սպինոցան (մեռ. 1677 ին) ճշմարտութեան սրբարանի մէջ. նորա մետաֆիզիքան (վերացական փիլիսոփայութիւնը) մաթեմատիկական ոճի կիրառութեամբ ստացաւ ճիշդ նեղքին կապակցութիւն. միայն թէ նորա մուխ խորհուրդը ճնաց առաւել մեծ մասին համար անմատնելի և նորա հետևողք ու հակառակորդք ըմբռնեցին

Նշանակը չաբլարանքի, սիրոյ անունով, պիտի լինէր խաչը օրհնարանի մէջ և այս տեղից յառաջացել է խօսքս Բօլինբրեյց։ Բայց Վալենտին Անդրեասը իւր խորհուրդը պլանդակել է ինքը, կամ թէ նորա խորամուտ հնդնութիւնը հասկացուած է պղտոր մտքով, և այսպէս Բոլինբրեյցեան կարգի անունով շատ անգամ երևել է և չքացել է մի վարդապետութիւն, որ կամեր մտութեամբ հրամայել բնութեանը և հոգեղէն աշխարհին։

նորան լոկ ամենաստուածեան (պանթէիստական) մտքով։ Նոյնքան աւելի ապահով անգլեացի Լոքքէն (մեռ. 1704) գնաց փորձի ճանապարհով, ուստի հետևեցնումէր նա ամենայն փիլիսոփայութիւն, որ և բարձրացնելով շինեց նա միակ փորձաքարը ճշմարտութեան։ Նորայն է պատկանում արդիւնաբաստարութիւնը, որ կը լուծանել շատ մթութիւններ և հետացնել շատ սխալութիւններ և կանխամտածմոլար կարծիքներ. բայց նա իւր շատ անգամ լոկ հարևանցի ըմբռնողութեան մէջ տարածել է և նոր մոլորութիւնք։ Նորանից աւելի բարձրապատիւ անմահ Լէյբնիցը (մեռ. 1716 թ.)։ Պատմութիւն, Աստուածաբանութիւն, Իրաւագիտութիւն, Վանաբակաբանութիւն և քաղաքավարութեան հրամտութիւնը գրեթէ նոյնքան էս պարտական են նորան, որչափ փիլիսոփայութիւնը, ուր նա ճանապարհ ընտրեց հիմնաւոր քննութիւնը, և զարթեցրեց աւելի խորին և աւելի ազատամիտ բանադատութիւն։ Նա նոյնչափ սաստիկ ներգործեց ընդդէմ Լոքքէի փորձականութեան, որչափ կարտեզեան երկուորակութեանը (dualismus)։ Սակայն նորա փիլիսոփայական հայեացքը Վրիստիան Վոլֆի (որ մեռաւ է 1754 թ.) ձեռով միայն, ըստ ճիշդ մաթեմատիկական ոճի, ստացաւ մի որոշ և բացայայտ կարգաւորը ձև, և ընդարձակուելով շինուեցաւ մի կազմուած, որ իւր նեղքին զուգակցութեամբ և դիտական կերպարանքով շուտով արտաքսեց առաջնի օրերի փիլիսոփայական սիստեմայքը Գերմանիայի մէջ և մի աւելի լաւ հոգի բերեց ու հաստատեց փիլիսոփայական դաստատուութեան աթոռների վերայ։

Խազմաթիւ մտածող գլուխներ հետևեցան Վոլֆի ձեռով հաստատած հիմնական կանոններին. շատերը արդէն հակամիտուեցան դէպ ի փիլիսոփայական ընտրողականութիւն։ Արամտութեամբ հանդէս եկաւ Վրուգհոսը (մեռ. 1775) հերքելու Վոլֆի վարդապետութեան կարգը. միայն թէ խաւնեց նա չափից դուրս շատ եկեղեցական տեսութիւնք փիլիսոփայականների հետ։ Իրրև ախոյեան ընդդէմ անհամար սխալութիւնների և կանխամտածմոլար կարծիքների և իրրև աշխատասէր յետ բերելու փիլիսոփայութիւնը կեանքի մէջ, վաղուց արդէն տեղապահ արդիւնաբաստար է գտանուել Թոմազիոսը (1728 թ.)։ Այլ աւելի խոր քան թէ Թոմազիոսը Կրքէգարդ (մեռ. 1752 թ.) գաղափարականութիւնը (Idealismus) և Հումի (մեռ. 1766) տարակուսասիրութիւնը (Սկեպտիկիսա-

նուէիւն) միջամուխ եղաւ Վռանտը (մեռ. 1804 թ.) փիլիսոփայութեան իսկութեան ներսը: Նոյնչափ ևս հեռի մնալով դաւանական ոճից և սկեպտիկականութենից, որչափ ընտրողականութենից և ժողովրդական փիլիսոփայութենից, կշռողութեան ճանապարհով, երբ որ զգաստութեամբ և ճշդապէս չափել էր մարդկային գիտողութեան սահմանքը, գտաւ, որ առընչութիւնը իրերի ըստ ինքեանց դէպ ի նոցա յայտնութիւնքը կարող չէ քննուիլ ըստ իւր վերջին պատճառների, ուրեմն ամենայն գաղտնական մեռոյ փիլիքա, որ կամէր այդ առընչութիւնը բացատրել, անհաստատ է: Նոյն միջոցին Վռանտը գործական փիլիսոփայութեան մուտքումը կարգեց մի Բ-րդ-ի օրէնս, որ մարդկային գործերի շարժառիթների մաքրութեամբ, որ նա պահանջումէր, ապատաքսեց բարեկեցականութիւնը (եւդայմոնիսմոս), որ մինչև այն ժամանակ ամենայն բանութեամբ տիրել էր բարոյական վարդապետութեան մէջ և յառաջ էր բերել այն կանոնը թէ մարդուս գերագոյն նպատակն էր բարեկենդանութիւն և գոյա առաւել ապահով ճանապարհը, առաքինութիւն: Հայց Վռանտի կրիտիկական սիստեման ցոյց տուեց յաղթող պատճառներով, թէ այո, բարեկենդանութիւնը է միայն դէպ եւնէլ վախճանը, բայց բանական զգալի էակների համար, իւր գործական օրէնստուութեան մէջ յառաջ է բերում լաւի լցուցանելը, նոյն իսկ լաւի պատճառով, իբրև գերագոյն նպատակը մարդկային ձգտողութիւնների, որին մօտենալ պարտ ու կարող էր կամքի ազատութիւնը, առանց մի ու դնելու դորանից յառաջանալի ախորժ կամ անախորժ հետևանքին: — Թէև շատերը գայթակղուեցան այն նոր եզրաբանութենից (տերմինոլոգիայից), որ Վռանտը ներս էր բերել փիլիսոփայական լեզուի մէջ, թէև մոռացող հակառակորդներ նորա բազմօրինակաբար նեղ և ցամաք սիստեմայի այս և այն թերութիւնքը ցոյց տուեցին ոչ առանց յաղթող պատճառների, այնու ամենայնիւ Վռանտ էր, որոյ ձեռով մի նոր ազատ շաւիղ բացուեցաւ վերին քննողութեան հոգուն, և պատուական գլուխներ ինքնօրէն մոռանալով հետևեցան այդ շաւղին, ամենք առաձին փիլիսոփայական դիտութիւնների մեծ մասը, կրիտիկական սիստեմայի վարդապետութեան համեմատ, նոր կերպարանեցին և միւսերը վստահ վերաթո իչքով դէպ ի գերփորձականի (Ցրանսցենդենտի) բարձրութիւնքը, որպէս զգուշացուցիչ լսատ միւսերի համար, ստուգեցին, թէ կարելի

չէր առանց միասին բաց թողուլ կրիտիկայի ճանապարհը և կրիտիկականութեան հոգին յեղափոխել դէպ ի իդէալիսմոս (ինչպէս արեց Փիխտէն) և դէպ ի Աբսոլուտիսմոս (որպէս արեց Շելլինգը)։ Նմին այս արտուղի շաւիղքը և մի քանի միւս, դիտնական խորհրդով ոչ այնքան մեծակշիռ խոտորմունք փիլիսոփայութեան մէջ, յուցանումէին բացայայտ, թէ մարդկային իմացականութիւնը դեռևս շատ հեռու էր մի ՙէլէմէնտօրնէնց տօռոն՚ ստանալէ. այլև, եթէ մի անդունդ միստիկականութեան այն, մօտ էր, որ դէպ ի վերինը ուղղած փիլիսոփայութեան դալար կեանքը խեղդէ իւր ճահճային օդի մէջ, այնու ամենայնիւ այն հետաքննութիւնքը և մի մասնով այս արտուղի խոտորմունքը ոտքի վերայ կանգնուն պահեցին փիլիսոփայական քննողութեան հոգին, մի ժամանակում, որ քաղաքական աշխարհում եղած դղրդիւններով հեշտ կարող էր կորուսանել իւր ընդունականութիւնը ուղղութեան դէպ ի մարդկութեան գերագոյն հոգալիքը։ Երժանապատիւ քննողք, սկսեալ 18 երորդ դարու վերջին քառորդից հետևեցան առհասարակ Ռանտի ձեռով յառաջացրած հետևութիւններին տեսական և գործական փիլիսոփայութեան մէջ։ Այդ օրինակ Ռէյնհօլդ, (մինչև երկու անգամ յետոյ փոխեց իւր հայեացքը) Ֆուխթեյնդ, Նաակոբ, Ֆօքքաուեր, Ֆէյրենրկլս, Կարլ Քրիստեան Նոհարդ Շմիդ, Միլեվեստեր, Քրուգ (որ նոր, իւր կողմից յառաջ բերած հիմնադրութեանը կրիտիկական անուն տուեց Միւնթեոյմոս (բաղադրականութիւն), Մաաս, Տիֆթրունկ, Նակոբ Միգիսմունդ Ռևք, Պեօրշքէ, Գերլաս և միւսեր։

Ս. Նազարեանց.

(Շարունակութիւնը յետոյ.)

ԸՐԹՄԱՆ ԴԻՏՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՀԱՆՈՒԱԾ

ՍՏ. Պետերբուրգեան շաբաթագրէն «Evangilisches Sonntagsblatt»

Ընդհակառակ տարուայ արդէն պատահեց մեզ կարդալ յիշեալ շաբաթագրի մէջ մի դեղեցիկ յօդուածք «Մատամորոս» անուն Սպանիացու վերայ, որ Աւետարանի լուսով լուսաւորուածք, համարձակուել էր ընդդէմ դուրս գալ սպանիական խաւար կաթոլիկութեան, և այդ պատճառով յարուցել էր իւր վերայ մեծ և դառն հալածանք: Սպանիայի թագուհին կնքել էր դատաւճիռը այսպէս. որ Մատամորոսը պատժուի ութամեայ բանտարկութեամբ. բայց յետոյ Գերմանիայի աւետարանական թագաւորները բարեխօս լինելով թագուհուս մօտ, համոզեցին նորան մեղմացնել պատիժը աքսորանքով:

Այն շաբաթագիրը ներկայ տարուս յունուարի 23 ից, 8 համարուս հրատարակել է Մատամորոս Սպանիացու մասին, քաղելով իւր տեղեկութիւնները Ամերիկեան թերթից, մի այսպիսի յօդուածք.

«Մատամորոսը (1863 թուակ.) նոյեմբերի 20 ից ուղղել է սպանիական Կորտէսների վերայ մի աղաչագիր, որ վերացնէին աքսորական դատաւճիռը իւր և նորա աքսորական ընկերների մասին, և շնորհէին կրօնական խղճի ազատութիւն: Մատամորոսը ոչ այնքան յուսացել է իսկոյն արդիւնաւոր կացուցանել իւր խընդիրը, որչափ մանաւանդ կամեցած է վկայութիւն տալ իւր հայրենիքի փոխանորդների առաջև այն սուրբ դործի մասին, որոյ պաշտպանն է ինքը: Առաւել նոր տեղեկութիւնների հիմամբ, Կորտէսները և նոցա վերայ ուղղած աղաչագիրը դարձել են ժո-

ղովրդի մէջ խօսք ու զրուցի նիւթ: Այդ այդ աղաչագրի մէջ ջատագովուած խնդիրքը հաւատի և խղճի ազատութեան, դրել է Տէրը Սպանիայի հրապարակական բեմի վերայ, ուր և կը մնան նոքա դրած, մինչև կը վճռահատուին Ընտարանի հոգով: Մենք մանաւորումենք այս տեղ այն արժանաւոր և զօրաւոր լեզուով գրած աղաչագրից մի քանի առաւել նշանաւոր տեղերը:

« Կրօնի ճշմարտութիւնը կարելի չէ երկաթով ու կրակով հարկ դնել մարդու վերայ: Հալածանքը յաւելացնում մարտիրոսներ, բայց ոչ ուրացողներ, մորթելի զոհեր, բայց ոչ հաւատափոխութիւնք: Այդուհետև նորա կրօնի մէջ ոչ ոք իրաւունք չունի նեղս մտանել և բռնադատել հոգին, որ նա հնազանդուի մի արտաքին աստուածպաշտութեան, որ նա չէ խոստովանում և կարող չէ յանձն առնուլ:

Մեր ազգային ձախորդութիւնների պատմութիւնը է մի անհերքելի ճարտարախօս վկայութիւն ընդդէմ տէրութենական ակնեղեցու թէոկրատեան հարստահարութեան: Նիդերլանդիայի ապստամբութիւնը, որ ամենաթանգ զոհարներից մինը դուրս է խլել Կաստիլեայի թագի միջից. Լբեանների և Մաւրիտանացոց արտաքսումը, որ անապատ շինեց մեր գործատուները. այն Ռուսո-դա-Ֆէքը, որ այնքան անմեղ արիւն թափեցին, արիւն, որ բողքումէ դէպ ի երկինք. այն սարսափելի պատահարները, որ քաղքանդ արեցին մեր աշխարհը. մեր խմացական կարողութիւնները գօսութիւնը (յամաքիլը և չորանալը) և մեր գերակշռութեան կորուստը. յաւելացրու դոյա վերայ մեր նաւային դիւշի խոնարհումը հին և նոր աշխարհի մէջ. այս բոլորս է անհրաժեշտ հետևանք այն մոլեկրօնութեան, որոյ երկաթի դաւազանը ծանրացնում մեր վերայ... Վերջապէս ժամանակ է, որ Սպանիան ըզդատաստայ, վերստին մտանէ ազատ ու լուսաւոր ազգերի միաբանութեան մէջ: Ազգային փոխանորդների և խորհրդականների բարձր իմաստութեանը հնչատ է խելամուտ լինել, թէ թագաւորութեան օգուտը, նորա կշռը և ապագայ բարեվիճակութիւնը հրամայողաբար պահանջումեն բարեկարգել օրէնսդրութիւնը կրօնական նեղսրտմտութեան հոգով, հեռացնել այն թշուառ տեսարանը, որ սպանիական հպատակներ, որոյ երջանկութիւնը լինելու էր իւրեանց ձիրքով ու հասկացողութեամբ ծառայել իւրեանց հայրենիքին, կամակոր յանցաւորների պէս խլվռումեն այն տեղից և

ստիպուած են պաշտպանութիւն և ապահովութիւն որոնել օտար հողի վերայ: Ահա ազաչաղչի շարագրողը է Սպանիայի որդի, խոստումէ իւր հօրերի լեզուն և մաղթումէ իւր հայրենիքին Նախախնամութեան աւելի պատուական ընծայները: Նորա միակ յանցանքն է, որ նա Աստուծոյ, որ հողի է, երկրպագումէ հոգով և ճշմարտութեամբ: Աստուծոյ ընծայով, ամուր հաստատուած է նա մի անկեղծ, խորարմատ հաւատի վերայ դէպի Յիսուս Քրիստոս, մեր Տէրը և փրկիչը. ամենևին վստահ է դէպ ի Նա, որ միայն է ճանապարհը, ճշմարտութիւնը և կեանքը, միակ միջնորդը Աստուծոյ և մարդկերի: Իբրև միակ առաջնորդող կանոն հաւատի, նա խոստովանումէ միայն Աստուծոյ բանը, միակ յայտնութիւնը Աստուծոյ կամքի. Նորա սիրտը փղձկումէ արտասուքով, երբ իւր աքսորանքի մէջ մտածումէ նա, թէ սոյն իսկ հաւատը և սոյն իսկ պատուական յոյսերը, որ Աստուծոյ ձեռնով դրոշմած են իւր սրտի խորքի մէջ, էին միայն, որ թողում չեն Նորան ստորադրել իւր անձը տէրութենական օրէնքով որոշուած աստուածպաշտութեան տակ, և ոչ իսկ կեղծաւորութեամբ — այդ թըշուառ հնարքովը վատթարների ձեռքում—պատսպարել իւր անձը մի անիրաւ և անդութ օրէնսդրութեան երեսից: Ազաչաղիրը վերջանումէ այսպէս.

«Համարձակվումեմ յուսալ, թէ պատկառանքով խնդիրս Նորոգեալների ուշադիր քննութեան ենթ կը լինի և թէ աքսորուած Սպանիացոյ առաջև յայտնվեալ և յաւիտեան կը բացուին հայրենիքի դուռները: Իսկ եթէ սուտ է այս յոյսը, ինձ հնարաւոր է դոնեայ այն քաղցր վկայութիւնը սրտի, որ ես լցուցել էի իմ պարտքս. որ և լինի աքսորանքի աշխարհը, որ Նախախնամութիւնը սահմանելու է ինձ, այդ տեղ ես կը վերադրձնեմ դէպ ի Նա ջերմ մաղթանք իմ հայրենիքի բաղդաւորութեան և իմ սիրելի հայրենակիցների պատուի ու բարեկեցութեան համար:

Ս. Նաղաբեանց.

Գ Ե Ի

ԵՐԻՒԵԼԵԱՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ·

(Շարունակութիւն և վերջ.)

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ·

ԺԱ·

Եւ նա հանդարտիկ եռանդուն բերնով
Մօտեցաւ դողդոջ նորա շրթունքին,
Եւ հրապուրական անոյշ խօսքերով
Պատասխանումէր նորա խնդիրքին,
Նորա քաջազօր ազդու հայեացքը
Կուսի աչքի մէջ սաստիկ նայումէր,
Նորան պյրումէր, ուղի՛ղ, առաջը
Դաշնակի նման փայլատակումէր,
Եղե՛ւկ, չար հոգին արդէն յաղթել էր,
Մահաբեր թոյնը նորա համբուրի
Խորասուզուեցաւ թամարի կուրծքը....
Մի ձայն վշտագին և սարսափելի
Խախտեց գիշերի խաղաղութիւնը...
Եւ այն ձայնի մէջ կար ամենայն բան,
Սէր, կիրք, նախատինք և աղերս վերջին,
Եւ անյոյս ողջոյն հրաժարական
Դեռահաս կեանքին....

. . . . . .

ԺԲ·

Ընդ՛ղառ ի վեր պարսպի շրջով
Լուռ պահապանը կէսգիշերային,
Միայնակ, թափառ, հանդարտ քայլերով
Կոչնակի հետն էր շրջումմ միասին·
Թամարի խուցին արդէն մօտ էր նա,
Երբ որ չափաւոր քայլերը կարճեց,
Եւ երկաթեղէն տախտակի վերայ
Աղմկեալ հոգով իւր ձեռքը դրեց,

Եւ շրջակայի լռութեան մէջը
Կարծես լսումէր իրրև արձագանգ
Երկու շրթունքի համբուրի ձայնը,
Կարճ աղաղակներ և թոյլ հեծեծանք.
Սաստիկ տարակոյս ամբարշտութեան
Մտաւ ծերունու սրտի մէջ խոկմն.....
Բայց երբ որ անցաւ մի քանի վայրկեան,
Բազմեցաւ այն տեղ խորին լռութիւն.
Մինչն հեռուից հողմը բերումէր
Խիտ տերևների հանդարտ շշունջը,
Մինչն վհատեալ ձայնով շրջումէր
Մթին ափերով լեռնապատ գետը.
Շտապումէ նա սրտով ահաւոր
Կարդալ աղօթքը մի սուրբ վկայի,
Որ հեռացնէ մտքից մեղաւոր
Փորձութիւնները չար սատանայի.
Խաչակնքումէ դողդոջուն ձեռքով
Մտածմունքիցը վրդովեալ կուրծքը,
Եւ լուիկ, ճնշիկ, շուտընթաց քայլով
Շարունակումէ իւր ճանապարհը.

ԺԳ.

Իրրև մի քնած սիրուն հրեշտակ,
Կոյսը գագաղում հանդարտ պառկած էր,
Նորա ճակատն էր առաւել ճերմակ,
Քան թէ այն քօղը, որով ծածկած էր.
Արտևանունքը նորա սևորակ
Փակած են արդէն մինչև յաւիտեան....
Բայց ո՞վ չէր ասէր, որ դեռ նոցա տակ
Սիրուն աչքերը քնած են միայն,
Որ սպասումեն միակ համբուրի,
Եւ կամ ծագմանը վաղ արշալուսի.
Բայց ի զո՜ւր օրուայ շողերը առատ
Նոցա վերայով ոստոստումէին,
Եւ ի զուր նոյնպէս շրթունք հարազատ
Նորանց վշտալից համբուրումէին.
Չէ կարող խլել այժմ ոչ մի բան
Մահու կնիքը յաւիտենական,
Եւ այն եռանդուն կեանքի փոխանակ,
Որ ձայնակից էր միշտ զգացմունքին,
Մնացել է միայն մի չնչին դիակ,
Որ դառնալու է հող բոլորովին.

Մի ժպիտ աղօտ և զարմանալի
Շրթունքի վերայ սառած մնացել էր,
Թպչդ և իմաստը նորա վշտալի
Գերեզմանի պէս խաւարային էր։
Ծաղը էր այն արդեօք դէպ ի օրհասը,
Թէ անպարտելի կասկածանք ասէմ.
Արհամարհանք էր դէպ ի մեր կեանքը,
Թէ թշնամութիւն երկնքի ընդդէմ։
Ի՞նչպէս իմանաս, աշխարհիս համար
Նշանակութիւնը նորա կորած է.
Մխայն ամենի աչքը անդադար
Դէպ՝ ինքն ակամայ հրապուրուէ.
Նման է մի հին արձանագրի,
Ուր կարելի է, մի հատ տառի տակ,
Ժամանակներից անցած դարերի
Պատմութիւններ շատ պահած են անքակ։
Եւ զօրութիւնը եղծանողական
Դեռ չէր ձեռք զարկել խղճական զոհին,
Որոյ երեսի գծերն ամենայն
Նոյն գեղեցկութիւնը պահած ունէին,
Ինչպէս արձանը մարմարիոնեայ,
Որոյ գծերը չեն յայտնում մի բան,
Ուր ոչ խելք ու միտք, ոչ զգացմունք կայ,
Որ խորհրդաւոր է մահու նման։
Ձեին զարդարուած դեռ ոչ միանգամ
Թամարի հանդերձքն ու զարդքը բոլոր
Ինչպէս գեղեցիկ և այնպէս փարթամ
Ուրախ օրերում և հանդիսաւոր.
Հայրենի հովտից ծաղիկներ քաղած
(Նոցա հին ծէսում պղպէս էր դրած)
Դիակի վերայ քաղցր բուրումն,
Եւ կարծես, մեռեալ ձեռքի տակ սեղմած,
Հրաժարականը երկրին տալիս են։

ԺԴ։

Դրացիները և ծնողները
Մէկ տեղ ժողուած բոլորը տրտում,
Լալով, ողբալով Թամարի մահը
Ճանապարհի են հանդերձանք տեսնում։
Վերջին անգամը հուզալ ծերուհին
Փետելով անխնայ գլխի ալիքը,

Կուրծքը ծեծելով նստումէ իւր ձին,
Իսկոյն գնումեն սգաւորները։
Եւ երեք օրուայ, երեք գիշերի
Ունին գնալու նոքա ճանապարհ,
Ոսկրներումը նախահայրների
Փորած է շիրիմ թամարի համար։
Հուդալ ծերունու պապերից մեկը,
Որ կողոպտում մեր մարդիկ և գիւղեր,
Երբ Հիւանդութեան ընկաւ կապանքը,
Եւ զղջման ժամը արդէն հասել էր,
Մեղքը քաւելու տուեց նա խոստում,
Շինել մի տաճար այն ժայռի վերայ,
Ուր միայն հողմի շաչիւնն է լսվում,
Եւ ուր լուն միայն թռչումէ հիմա։
Եւ կաղբէք լերան ձիւների մէջը
Միայնակ տաճար բարձրացաւ շուտով,
Ուր այն չար մարդու ոսկերոտիքը
Նորից ստացան հանգիստ անվրդով։
Եւ հանգստարան դարձաւ միայնիկ
Ամպի հարազատ ժայռերէն լեառը,
Կարծես թէ այն տեղ երկնքի մօտիկ
Տաք է մեռնողի բնակարանը։
Կարծես թէ այն տեղ մարդերից հեռի
Վերջին խոր քունը չէ վրդովուելու....
Ի զէր. մեռելին ոչ վիշտը նախնի,
Ոչ խնդութիւնքը չեն երևելու։

ԺԱ։

Կապոյտ եթերքի տարածութենով
Սուրբ հրեշտակը անմեղ աշխարհի
Թռչումէր արագ ոսկեայ թևերով,
Տանումէր գրկած մեղաւոր հոգի։
Եւ մխիթարիչ անոյշ խօսքերով
Ցրումէր մտքից նորա կասկածը,
Վերայից սրբումէր արտասուքով,
Մեղքից ու կրքից մնացած հետքը։—
Արդէն եդեմայ անոյշ ձայները
Հեռուից նոցա հասանումէին,
Երբ որ կտրելով բաց ճանապարհը,
Ելաւ անդունդից դժոխքի հոգին։
Մրրկի պէս էր թռուում զօրաւոր,
Փայլումէր սաստիկ կայծակի նման,

Եւ յանդգնութեամբ մի խելացնոր
«Նա իմն է» գոռաց ձայնով խստութեան,
Եւ իւր պահպանչի կուրծքին սեղմուած
Խեղճիկ Թամարի մեղաւոր հոգին,
Աղօթք առնելով դէպի մեծն Աստուած,
Վախն էր աչխատում ցրուել ահագին.
Վճիռն օրհասի լցվումր հիմա,
Նորա առաջև գևը կանգնած էր.
Բայց ո՞վ կարող էր ճանաչել նորան,
Ի՛նչ չար աչքերով վերան նայումէր,
Ի՞նչպէս լցուած էր ոխակալութեան
Անսպառելի թունով մահաբեր,
Եւ ի՞նչ սառնութիւն գերեզմանական
Անշարժ երեսից նորա փչումէր.
«Կորի՛ր դու խաւար հոգիդ անարժան»
Սուրբ հրեշտակը պատասխանումէ,
«Որչափ պանծացիր, շատ է քեզ և այն,
Արդ գատաստանի ժամը հասել է.
Բարւոք է և ճիշդ Աստուծոյ վճիռը,
Փորձանքի օրերը անցան գնացին,
Թամարի վ'րայից չարի կապանքը
Ընկան հազուստի հետ ի միասին.
Խմացի՛ր, գոռո՛զ, որ մեք, վաղուց է,
Սպասումէինք սորա գալստեան
Եւ սորա հոգին նոցանից մինն է,
Որոց կեանքն է մի րոպէ միայն
Այն անտանելի չարչարանքների,
Անհասանելի մխիթարութեան.
Նոցա լարերը Արարիչն արդար
Լաւագոյն օդից հիւսել, կազմել է,
Բայց ո՛չ նոքա են աշխարհի համար
Եւ ո՛չ աշխարհը նոցա համար է.
Շատ սաստիկ գնով Թամարի հոգին
Մոլորութենից փրկեց իւր անձը.....
Տանջանքներ կրեց, սիրեց կաթոգին
Եւ սիրոյ համար բացաւ եդեմը»,
Եւ հրեշտակը սաստող աչքերով
Այն փորձիչ գևի վերայ նայեցաւ,
Եւ ուրախ ուրախ թևերը թափ տալով,
Երկնի շողերում խոր ընկղմեցաւ.
Անիծեց իսկոյն գևը յաղթուած,
Բոլոր մոքերը իւր ցնորական,

Եւ ամբարտաւան դարձեալ նա մնաց
Աշխարհիս վերայ առաջուայ նման,
Դարձեալ միայնակ և առանց սիրոյ,
Եւ դարձեալ առանց մխիթարութեան։

—

Ո՛ւառ ի վայր տեղով ապառաժ սարի,
կպչաւուր կոչուած ծործորի վերայ
Սուր սուր ծայրերը հին աւերակի
կանգնած են անշարժ գեռ մինչև հիմա։
Աւանդութենից մնացած կան գեռ
Տղայոց հաւար ահեղ առակներ.....
Ծառերի մէջը սև սև կանգնած է
Իբրև մի տեսիլք կարծես խօլական
Արձան մի լուիկ որ ականատես է
Անցած օրերի այն կախարդական,
Վայրը սփռած են մեծ աւուլները,
Ծաղկումէ երկիրը, գալարազարդվում,
Եւ բարբառների անկարգ ձայները
կորչումեն ձորի խորութեան միջում,
կարաւանների երկայն դասերը
Գնումեն հեռուից բոժոժի ձայնով,
Եւ մէգի միջից վիժելով գետը
Փայլումէ, ճերմակ փրփուր դիզելով,
Եւ ընութիւնը միշտ մանուկ կեանքով
Անհոգ տղայի պէս
Խաղումէ, կարծես,
Ջողմի զովութեամբ, գարնան զարդերով
Արեւի պայծառ ճառագայթներով։
Բայց այն դղեակը այժմ տխուր է,
Որ պաշտօն ունէր իւր ժամանակին,
Նման խեղճ ծերի, որ գեռ ապրումէ
Իւր ընտանիքից զուրկ բոլորովին,
Արդ նորա անտես ընակիչները
Լուանի ծագման են միայն սպասում,
Այն ժամանակ է նոցա հանդէսը,
Բզզումեն, շչում, չորս կողմ են վազում,
Ալևոր սարդը, նոր ճգնաւորը,
Իւր ոստայնների հիմը դրել է,
կանաչ մողէսի բազմաթիւ սեռը
Տանիքի վերայ ուրախ խաղումէ,
Օձը մուխ ծակից դզոյշ սողալով

Դէպ ի մեծ սալը հին պատշգամբի,
Մերթ գալարվումէ, օղեր կաղմելով,
Մերթ երկարվումէ ձիպ և ուղղակի,
Եւ փաղփաղումէ գաշնակի նման,
Որ վաղուց հետէ թողած էր գետնին
Գաշտումը անցած արիւնհեղութեան,
Եւ որ այլ չէր պէտք մեռած հերոսին։
Օտար են թուում ամեն բաները.
Չկայ ոչ մի հետք անցած օրերու,
Երկար ժամանակ դարերի ձեռքը
Ջանք է միշտ դրել նոցա ջնջելու,
Եւ չկայ ոչինչ, որ յիշէ մարդու
Փառաւոր անունը դժբաղդ Հուգալի
Եւ կամ դատրիկը նորա սիրելի,
Իսկ այն տաճարը լերան գագաթին,
Ուր որ թաղած են նոցա ոսկերքը,
Պահնել է անխախտ տեսչութիւն վերին,
Եւ ցարդ կանգնած է ամպերի մէջը.
Նորա դրան մօտ հաստատ կանգնած են
Երկու մեծ քարեր իրրև պահապան,
Կուրծքերի վերայ ճօշի փոխարէն,
Սառոյցն է փայլում յաւիտենական,
Եւ ձեան հիւսերի դէղերը անղօր
Ջրվէժի նման լեռնէվայր թափած,
Այս տեղ և այն տեղ կանգնած են խոժոռ
Մի յանկարծահաս ցրտից լռնուած։
Ճերմակ պատերից ձիւնը փչելով
Այն տեղ նայելու գալիս է քամին,
Երգ է յօրինում մերթ երկար ձայնով,
Մերթ ձայն է տալիս պահապաններին։
Եւ շատ վաղուց է, որ շնորհների
Քարերի վերայ ոչ ոք չէ լացել,
Ապառաժ ժայռը խոժոռ կաղքէկի
Իւր պահած գիւտը ամուր է բռնել,
Եւ մարդու տրտունջը յաւիտենական
Չէ կարենալու երբէք վրդովել
Խաղաղութիւնը նոցա անվախճան։

Մ. Սարաֆեանց.